№ 9 ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 15

1906

ԿԻՐԱԿԻ ՅՈՒՆՎԱՐԻ 15 № 9

ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի. առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисъ, редакція «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Տելեֆօն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.

Տելեֆօն № 253.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ՆԵՐԿԱՅ 1906 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(34-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 ռուբլի է, տասն և մէկ ամսվանը նոյնպէս 10 ր., տասն ամսվանը՝ 9 ր., ինն ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., եօթ և վեց ամսվանը՝ 6 ր., հինգ ամսվանը՝ 5 ր., չորս ամսվանը՝ 4 ր., երեք ամսվանը՝ 3 ր., երկու ամսվանը՝ 2 ր. և մի ամսվանը՝ 1 ռուբլի: Յունվարի 1-ից մինչև 1 յունիսի 4 ռուբլի:

ԱՐՏԱՍԱՀՄԱՆԵԱՆ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ. Ամերիկայի բաժանորդները պէտք է վճարեն տարեկան 6 դօլլար. Եւրօպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 ռուբլի:

«Մշակին» գրվել կարելի է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ. (Բազարնայա և Բարօնսկայա փողոցների անկիւն): Ստորագրվել կարելի է միայն ամսի 1-ից:

Կայսրութեան ուրիշ քաղաքներից «ՄՇԱԿԻՆ» գրվելու համար և առհասարակ նամակներ և ծրարներ ուղարկելիս, պէտք է դիմել հետևեալ հասցէով: ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ" իսկ արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

Յայտարարութիւններ ընդունվում են բոլոր լեզուներով:

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԵՐԵՄԻԱ ԳԷՈՐԳԵԱՆ

ԳՈՒԼԱԶԵԱՆՑԻ

առևտրական խանութը դեկտեմբերի 1-ից 1905թ.ի ՓՈԽԱԴՐՎԱԾ Է Ա. Մանթաշեանցի նոր շինութիւնը, որ գտնվում է հին ծածկած բազարխանայի կից: 8—10

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ընտրութիւնների խնդիրը. Վերջին տեղեկութիւններ. Դէպքերը Վրաստանում. Նոր հրատարակութիւններ. Ինչպէս խաղաղացնել երկիրը. Կենդրոնացում թէ ֆեդերային. Մոսկվայի արհաւիրքից. Նամակ խմբագրութեան. Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան գործադրութիւնը Կովկասեան երկրում. Ներքին լուրեր. Ռուսական տեղեկութիւններ. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ֆրանս-գերմանական վէճը ու ֆրանսիական պրօլետարիատը. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԽՆԴԻՐԸ

I

«Մշակի» ներկայ համարում մենք զետեղում ենք պաշտօնական տեղեկութիւններ ընտրողական այն կարգերի մասին, որ պէտք է մեր երկիրը գործադրէ պատգամաւորներ ընտրելու ռուսական պարլամենտի կամ Դումայի համար:

Մենք առ այժմ մտադիր ենք կանգ առնել միայն մի կէտի վրա, այն է Երևանի և Գանձակի նահանգի ընտրութիւնների ձևի վրա: Այդ նահանգներում ընտրողական ժողովները ընդհանուր չը պէտք է լինեն բոլոր ազգերի համար, այլ բաժանված երկու մասի, մէկը հայերի, իսկ միւսը Թուրքերի համար:

Ինչ վերաբերում է միւս ազգութիւններին, նրանք կը մտնեն այդ բաժիններից մէկի մէջ, նայած տեղական հանգամանքներին:

Ուրեմն հայերը իրանց թեկնածուների ընտրութիւնների վերաբերութեամբ թողված կը լինեն միայն իրանց սեփական տրամադրութիւններին և կարգադրութիւններին, առանց պայմանաւորվելու և բանակցութիւններ վարելու Թուրքերի հետ:

Ընտրութեան այդ ձևը թելադրված է մեր ներկայ հանգամանքներով: Հայ-Թուրքական ընդհարումները մեծ խոչընդոտ և արգելք պէտք է հանդիսանային ընդհանուր ընտրողական ժողովներ կազմելու: Նոյն իսկ կարող էր մի այնպիսի բան պատահել, որ ամբողջ շրջաններ հնարաւորութիւն չէին ունենայ ընտրողական ժողովներ անել և կը դանդաղեցնէին կամ բոլորովին կը խանգարէին պատգամաւորների ընտրութեան գործը:

Ներկայումս ընտրողական ժողովների բաժանումը տրամաբանական է և ունի գործնական որոշ յարմարութիւններ. բայց գուցէ նա նշանակութիւն ունենայ և ապագայում:

II

Անկասկած՝ հայ հասարակութիւնը իր շրջանում աւելի հեշտութեամբ կարող է ընտրութիւններ անել, քան երբ նա գործում է խառն միւս ազգութիւնների հետ: Նոյն դիւրութիւնն էլ կունենան Թուրքերը իրանց շրջանում:

Հայ հասարակութեան համար կարևոր է պատրաստվել այդ ընտրութիւններին և օգտվելով դէպքից կանոնաւորութիւն մտցնել ընտրողական գործի մէջ: Այն ազատութիւնը, որ տրված կը լինի ընտրողական պայքար մղելու, ընտրելիների ցուցակներ կազմելու և հասարակական գործողների վերաբերմամբ որոշ պահանջներ դնելու, այդ ազատութիւնը պէտք է փորձ լինի մեզ համար առհասարակ բարեկարգելու ընտրողական գործը մեզանում:

Մենք հայերս ընտրողական սկզբունքին հետևող ազգ ենք եղել դարերից ի վեր: Մեր ժողովուրդը միշտ և ամեն տեղ ձգտել է ընտրողական եղանակ գործադրել իր պաշտօնեաների և պետերի համար: Եւ եթէ եղել են շրջաններ, երբ նա շեղվել է ընտրողական սկզբունքին ճիշդ հետևելուց, դրանք եղել են միայն ազգի կեանքի ձախորդ տարիների շրջանում, երբ ժողովուրդը չէ կարողացել տէր կանգնել իր իրաւունքների:

Սակայն հենց որ կարելի է եղել փոքր ի շատէ կենտրոնանալ հասարակական գործերի վրա, հայ ժողովուրդը իսկոյն ամենամեծ եռանդով և յամառութեամբ առաջ է մղել ընտրողական սկզբունքը և ձգտել դարձնելու նրան պարտաւորական իր բոլոր գործունէութիւնների մէջ:

III

Վերցրէք հայութիւնը ուր որ էլ ցանկանաք, նոյն իսկ բարբարոսական երկիրներում և դուք կը տեսնէք, որ ընտրողական սկզբունքը ամեն տեղ ղեկավարող դեր է կատարում: Թիւրքիայում, Պարսկաստանում, Բուլղարիայում, Եգիպտոսում, Ամերիկայում և առհասարակ ամեն տեղ, ուր հայերի մի փոքր ի շատէ ստուար բազմութիւն կայ, փորձեր են անվում մարդկանց մի տեղ խմբելու և ժողովներ կայացնելու զանազան ներկայացուցիչներ, լիազօրներ, պատգամաւորներ, պաշտօնեաներ և ամբողջ յանձնաժողովներ ընտրելու համար:

Սակայն չը պէտք է աչքաթող անենք և մոռանանք մի տխուր երևոյթ, որ նոյնպէս երևան է գալիս ամեն տեղ: Դա այն մասնակի ձգտումներն են, որոնք նպատակ ունեն ճնշել, սահմանափակել և խեղդել ընտրողական գործերը: Ազգային գործերը մի կերպ իրանց ձեռքը գցած անձեր, կրօնական պետեր և ուրիշ անհատներ, որոնք ազդեցիկ դեր են գրաւել հանգամանքների շնորհիւ, խէթ աչքով են նայել ընտրողական գործին և շատ անգամ աշխատել են վնասել նրան և նոյն իսկ խախտել սկզբունքը զանազան պատրուակներով, ազգասիրական քաղաքագիտութեան հմայքներով:

Եւ ունեցել են աջողութիւն, իրանց ձեռքին պահելով տարիներ շարունակ զանազան պաշտօններ և գործեր: Ժամանակով, ի հարկէ, ժողովուրդը տէր է դարձել իր գործերին, բայց ոչ առանց մաքառումների և երբեմն նոյն իսկ սուր ընդհարումների:

IV

Այժմ ձեռնարկելով ընտրութիւնների՝ պատգամաւորներ ընտրելու համար, մենք, ճիշտ է, ըստ երևոյթին առանձին կերպով շահագրգռված չենք զգում մեզ, որովհետև շատ քիչ է լինելու մեր պատգամաւորների թիւը պարլամենտում և նրանք կազմելու են ամբողջ պարլամենտական կազմի մի չնչին մասը, բայց մենք պէտք է օգտվենք դէպքից պարզելու մեր պահանջները պարլամենտից և պարլամենտական գործողից, մենք պէտք է հանդէս բերենք այն բոլոր խնդիրները, որոնց վերաբերութեամբ ցանկալի է բաւարար և դրական լուծում ստանալ ռուսական պարլամենտից, ուր այսուհետև պէտք է լինի օրէնսդիր մարմինը պետութեան համար և առանց որի անհնարին է հրատարակել որ և է օրէնք պետութեան մէջ:

Մեր պատգամաւորը պէտք է կարող լինի մեր կարիքների ճիշտ և հեղինակաւոր արտայայտիչը լինել: Իսկ դրա համար կարևոր է, որ մենք մի կողմից ընդգծենք, ուսումնասիրենք և մշակենք մեր պահանջների ծրագիրները, իսկ միւս կողմից այնպիսի ներկայացուցիչներ ընտրենք, որոնք իսկապէս կարող լինեն մեր այդ պահանջների թարգմանը լինել պարլամենտում:

Դա շուտով կը դառնայ հերթական մեր հոգսերից մէկը և մենք պէտք է սկսենք այժմեանից նախապատրաստական գործողութիւններ:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Նախիջևանից Թիֆլիսի Թեմի առաջնորդին հեռագրում են յունվարի 13-ին, երեկոյեան ժամի 7 և 40 ր.

«Նօրսում դեկտեմբեր ամսում մեռել են 50 հոգի. գաւառական բժիշկը նոր վերադարձաւ. ուղարկում եմ ֆէլդշերին: Երէկ ուղարկեցի վերմակներ, ներքնակներ, ռոմամաններ և հին հագուստներ: Բայց ինչ օգուտ այդ բոլորից և դեղօրայքից, երբ մի քանի հոգու պատսպարող մի վերմակը անգամ հարկ հաւաքողները ծեծելով խլում են նրանցից: Ինչ օգուտ կոպէկների օգնութիւնից, երբ այդ կոպէկներն էլ խլվելու են:

Դիմեցէք Փոխարքային և խնդրեցէք որ յետաձգեն վնասված գիւղօրայքում հարկերի հաւաքելը: Մինչդեռ հայ ազգաբնակութիւնը առանց այն էլ աչքաթող է արված: Բռնէ կառավարութիւնը խղճա: Միլիօներով կողոպտուներ գանձող Թուրքերը արժանանում են նահանգապետի ամեն տեսակ հոգածութեան: Միթէ հայը իր հպատակը չէ: Եթէ չեն ուզում օգնել, գոնէ չը խլեն էլ վերջին պատառ հացը, վերջին կոպէկը: Նաւթ չը կայ, շաքար չը կայ: Ամեն կողմից գանգատվում են բռնութեամբ հարկերը ժողովելու մասին: Այսպիսի պայմաններում ամեն մի օգնութիւն անկարելի է անել: Այսօր կօզակները բռնեցին ռուս մաշինիստ Պետրովին՝ ռումբ և պայթուցիկ նիւթեր հետը»:

Թովմա վարդապետ

—

«Յառաջ»-ի խմբագրութիւնը ստացել է Գօրիսից հետևեալ հեռագիրը յունվարի 13-ից:

«Յունվարի 6-ին Թուրքերը ոստիկան Շախսուարբէկի առաջնորդութեամբ, Թւով 700 հոգի, յարձակվեցին Անգեղակօթի վրա: Ներս խուժեցին գիւղը, սպանեցին 200 մանուկներ ու կանայք և այրեցին մի տուն: Վրա հասաւ Քեռին վեց հոգով, սպանեցին շատ Թուրքեր: Թուրքերը փախան՝ Թողնելով ութ դիակներ տեղում: Շախսուարբէկը ղեկավարում էր Ագուլախի գործերը»:

—

Կարս, 10 յունվարի.

Այս բոպէիս լուր տարածվեց տեղումս, որ տխրահռչակ Կուրբան-էֆենդին իր հրոսակախմբով յարձակում գործելով Զարիշատ գաւառամասի մի ռուսաբնակ գիւղի վրա՝ բոլորին Թալանել է... խնայելով միայն քրիստոնէական եկեղեցին:

Մանրամասնութիւնները պակասում են:

Տեղացի

—

Ռուսաց Հեռագրական Գործակալութիւնը հետևեալ հեռագիրն է հաղորդում Ազդամից, յունվարի 12-ին.

«Յունվարի 11-ին գեներալ Գօլօշչապօվ ենթարկեց Թնդանօթային կրակի Խանաբաղ և Կլիչբաղ հայոց գիւղերը, որոնց բնակիչները դեկտեմբերի 25-ին յարձակվել էին պաշարների այն տրանսպօրտի վրա, որ ուղարկվում էր Շուշի քաղաքի քաղցած մուսուլմաններին: Հայերը յարձակվեցին Ղաջար Թուրք գիւղի վրա: Կռիւը շարունակվում է: Գեներալ Գօլօշչապօվի զօրախումբը ահագին տրանսպօրտով գնաց այսօր Շուշի»:

ԴԷՊՔԵՐԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

Գեն.-մայօր Ալիխանովի կոչի համաձայն՝ Քութայիսի նահանգապետ Վ. Ա. Ստարօսելսկին և փոխ-նահանգապետ Կրպչինսկին յունվարի 12-ին ժամանել են Կվիրիլի: Գեն. Ալիխանովը նրանց ընդունել է և ձեռք անգամ չէ տուել, այլ առաջարկել է անյապաղ մեկնել Թիֆլիս առաջին գնացքով և եթ: Յունվարի լոյս 13-ի գիշերը Ստարօսելսկին և Կրպչինսկին հասան Թիֆլիս և իջևանեցին «Օրիանտ» հիւրանոցը, ուր, ասում են, ապրում են հսկողութեան տակ:

—

Աջամէթի կայարանում, «Ցնօրիս-Ծղալի» լրագրի ասելով, գնդակահար են արել ապստամբների 12 պատւիրակներին: Դրանից յետոյ՝ զօրամասի հրամանատար գնդապետ Չիկօվանին մեկնել է Քութայիս:

—

Սվիրեկի և Րիօն կայարանների պաշտօնեաները հեռագրով հաղորդում են Թիֆլիսի կենտրոնական վարչութեան, որ այդ կայարաններում իրանք արդէն 3-դ օրն է քաղցած են մնացել, որովհետև ուտելիք չը կայ. գնացքները չեն բերում, իսկ տեղական խանութները հրդեհի ճարակ են դառել:

—

Քութայիսի նահանգից Թիֆլիսի նահանգն անցնելու համար պահանջվում է այժմ անցագիր: Նոյն պահանջը արվում է նաև Թիֆլիսի նահանգից Քութայիսինը անցնելիս: Անցագիրը պահանջում են Կվիրիլի կայարանում. չունեցողին առաջ անցնելու չեն թողնում:

—

Մենք հաղորդել էինք, որ «Возрожденіе» լրագրի խմբագիր պ. Փօտապօվին ձերբակալել են Քութայիսում: Ասում են, որ նրան ազատ էին թողել, բայց յունվարի 12-ին նրան կրկին ձերբակալել են Րիօն կայարանում:

ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Թէ Եւրօպայում և թէ Ամերիկայում հրատարակվում են մի քանի հանդէսներ, որոնց նպատակն է թէ հայկական դատի պաշտպանութիւնը և թէ Հայաստանը ու հայ ժողովուրդը եւրօպական և ամերիկական ազգերին ծանօթացնելը:

Ամերիկայի Բօստօն քաղաքում հրատարակվում է անգլիերէն «Armenia» անունով մի ամսագիր, որի նշանաբանն է Վ. Գլադստօնի հռչակաւոր խօսքը՝ «To serve Arménia is to serve Civilization»—«Հայաստանին ծառայելը՝ քաղաքակրթութեան ծառայել է»: Այդ ամսագրի պատասխանատու հրատարակիչներն են մի շարք հայասէր ամերիկացի քաղաքական գործիչներ և յայտնի գրողներ, իսկ աշխատակիցների շարքում մենք տեսնում ենք Էդուարդ Կլէմանի, միսս Ալիս-Շտօն-Բլեկվէլլի, միսս Ֆրանց Միլլէրի, Վ. Մ. Լլօյդ Գարրիսօնի անունները: Մենք ստացանք երկրորդ տարեշրջանի, որ սկսվում է 1905 թ. նոյեմբերից, 1, 2 և 3-րդ համարները: Բազմաթիւ յօդուածների շարքում, վերաբերեալ հայերի վիճակին Թիւրքիայում, Թուրք-հայկական ընդհարումներին Կովկասում, տպագրված են և միսս Ֆրանց Միլլէրի ոտանաւոր Թարգմանութիւնները Պետրոս Դուրեանից, Մ. Պէշիկթաշլեանից: Իսկ միսս Բլեկվէլլ Թարգմանել է Րաֆֆու «Ձայն տուր ով ծովակ» բանաստեղծութիւնը:

Լօնդօնում այս տարվայ սկզբից սկսվել է հրատարակվել «Pro Arménia» Թերթի անգլիերէնը Ա. Սթէդի ղեկավարութեամբ: Առաջին համարի գլխին խմբագրութիւնը զետեղել է Բեռլինի դաշնագրի 61-րդ և Կիպրոսի դաշնագրի առաջին յօդուածները, կամենալով ցոյց տալ, որ նա ձգտելու է այդ երկու յօդուածների իրագործման: Առաջնորդող յօդուածի մէջ նա ասում է. «մենք Թիւրքատեացներ չենք, երբ պահանջում ենք ռէֆօրմներ, որոնք օգնութիւն և բարեբաստութիւն կը բերեն Թիւրք ժողովրդի մեծամասնութեան: Մեր նպատակը չէ հաստատել հայկական մի բռնակալութիւն Թիւրքերի վրա և ոչ էլ մի Թուրքական բռնակալութիւն հայերի վրա, այլ հաստատել ամենքի համար մի տանելի ռէժիմ»:

Բացի այդ պարբերական հրատարակութիւններից, մեզ ուղարկված են մի քանի բրօշիւրներ և յօդուածներ Թուրք-հայկական արիւնահեղ ընդհարումների մասին: Մի շարք յօդուածներ, խիստ շահագրգիռ և հմտալից, գրել է Լուիջի Վիլլարի «Վեստմինստէր Գազէթ» անգլիական Թերթի մէջ: Եթէ չեն մոռացել մեր ընթերցողները, Վիլլարին մի Թղթակից էր, որ եկել էր ճանապարհորդելու մեր երկրում այս ձմեռ և այժմ վերադառնալով, սկսել է տպագրել իր տեսածը և հաւաքած տեղեկութիւնները: Մի ուրիշ գրող, ֆրանսիացի Լ. Կօնստանսօն, որ 1901 թ. հրատարակեց մի գիրք Պարիզում «Մուսուլմանները և քրիստոնեաները» վերնագրով, տալիս է այժմ «Կովկասի Հայերը» վերնագրով մի բրօշիւր, ուր աշխատում է լուսաբանել Թուրք-հայկական ընդհարումները այնպէս, ինչպէս հասկանում են այժմ Եւրօպայում:

Թէ Վիլլարիի և թէ Կօնստանսօնի յօդուածները, լինելով սաստիկ հետաքրքրական և կարևոր, մենք կաշխատենք յաջորդ անգամ տալ նրանց Թարգմանութիւնը քաղուածօրէն:

Հ. Ա.

ԻՆՉՊԷՍ ԽԱՂԱՂԱՑՆԵԼ ԵՐԿԻՐԸ

Թուրք-հայկական յարաբերութիւնները լարված են վերին աստիճանի: Սա մի դժբաղդութիւն է ամբողջ Կովկասի համար, իսկ մեզ, հայերիս համար մի զարհուրելի կացութիւն, որի հետևանքները չը պէտք է կարողանանք հարթել տասնեակ տարիների ընթացքում: Մենք այժմ չենք էլ կարող մտածել այդ սոսկալի հետևանքների մասին. մեզ բոլորիս զբաղեցնում է միայն մի միտք—որքան կարելի է շուտ վերջ դնել այս անմիտ գազանային արիւնահեղութեան:

Բայց ինչպէս վերջ դնել. ահա մի հարց, որը տանջում է մեզ, որը մեր այժմեան ամենակենսական խնդիրն է:

Համարեա մի տարի է, որ կռիւը շարունակվում է. այդ մի տարվայ մէջ մենք շատ բան տեսանք, շատ բան հասկացանք, հասկացանք մեր իսկական բարեկամներին և Թշնամիներին, զգացինք մեր լքեալ դրութիւնը, զգացինք և ուրիշ շատ դառը բաներ:

Այս մի տարվայ մէջ թէ Թուրք ժողովրդի բոլոր խաւերը, թէ մեր միւս դրացիները, թէ կառավարութիւնը և թէ Կովկասում գոյութիւն ունեցող բոլոր յեղափոխական կազմակերպութիւնները, այսպէս թէ այնպէս, պարզեցին իրանց վերաբերմունքը դէպի հայ-Թուրքական կօնֆլիկտը:

Այս տարվայ ընթացքում քննութեան առնվեցին այդ կօնֆլիկտի հետ կապ ունեցող հետևեալ հրատապ հարցերն ու դրութիւնները:

1) Կառավարութեան քաղաքականութիւնը և նրա գործ դրած միջոցները:

2) Թուրք ժողովրդի վերաբերմունքը, նրա նախապատրաստ լինելը, նրա ահագին զինուորութեան չափը, նրա հոգեբանութիւնը, կուլտուրական յետամնացութիւնը, զարհուրելի գազանութիւնը, նրա կռուելու տակտիկան, անպատիժ մնալու վստահութիւնը և նենգաւոր քաղաքականութիւնը հաշտութեան հարցում:

3) Վրաց շովինիստ լրագրութեան և խմբակների վերաբերմունքը, նրանց հին ու մանր հաշիւների դիմակաւորած հրապարակ հանելը:

4) Յեղափոխական կազմակերպութիւնների և ֆրակցիաների բռնած դիրքը, նրանց միմեանց յոյժ հակասող յայտնած կարծիքները:

5) Հայ ժողովրդի յանկարծակի բռնվելը, նրա անպատրաստականութիւնը, ինքնապաշտպանութեան Թոյլ արտայայտութիւնը, նրա քարուքանդ լինելը, նրա անօգնական և վրդովված դրութիւնը:

Ապագայ պատմաբանը կարևորութիւն կունենայ հատորներ գրել այս տխուր հարցերը քննելու և պարզաբանելու համար. բայց որքան էլ նա անաչառ լինի, պէտք է հետևեալ եզրակացութիւններին գայ:

1) Եղել են մարդիկ, գուցէ և պետութիւններ, որոնք վաղուց ծրագրել էին այս արիւնոտ օրերը հայ և Թուրք ժողովրդների համար:

2) Մեր բիւրօկրատական կառավարութիւնը, եթէ ինքը նախաձեռնող չէ եղել, ամեն կերպ աշխատել է այդ արիւնհոսութիւնը դարձնել սոսկալի և տևողական: Նրա ամբողջ համակրութիւնը եղել է Թուրքերի կողմը, որպէս ռէակցիօներ ուժի, որոնց տգիտութիւնից և վայրագութիւնից օգտվել է ամենայն ճարպիկութեամբ:

3) Վրաց ազգի 99%՝ զբաղված իր ներքին դասակարգային պայքարով, անտարբեր գտնվեց դէպի հայ-Թուրքական կօնֆլիկտը և միայն մի քանի խմբակներ շովինիստական և անձնական հաշիւներից դրդված ճիգեր էին Թափում ստուեր գցել հայ ժողովրդի վրա և մարդասիրական ու չէզոքութեան դիմակի տակ տաքացնել կռիւը:

4) Յեղափոխական կազմակերպութիւններից, որոնք հենց սկզբից հայ-Թուրքական կօնֆլիկտի բնաւորութիւնը որոշեցին և իրանց համակրութիւնը դարձրին հայ ժողովրդի կողմը. նրանք ասում էին՝—հայ-Թուրքական կռիւը՝ լոյսի և խաւարի կռիւ է, ազատութեան և բռնութեան կռիւ է, հայ ժողովուրդը ազատագրական մեծ պատերազմի առաջին և ամենազարհուրելի զոհն է: Միւս յեղափոխական կազմակերպութիւնները, համարեա ամբողջովին կրկնելով այս բնորոշումը—խուսափում էին դրականապէս որոշ դիրք բռնել. այդ որոշ դիրքը կը պահանջէր նրանցից և որոշ գործնական պարտականութիւններ, որոնցից նրանք ցանկանում էին յամենայն դէպս խուսափել: Զարմանալի է միայն, որ այդ յեղափոխական կազմակերպութիւնները բաւականաչափ անկեղծութիւն չունեցան պարզ կերպով դնելու հարցը և ցանկանալով դերիշխող դեր կատարել Կովկասում տեղի ունեցող բոլոր հասարակական և քաղաքական երևոյթների մէջ, սովորվեցին մի շարք անհասկանալի հակասութիւններ կատարել և ի վերջոյ, իբրև հաշտարար դերակատարներ—ճշմարտութիւնը Թագցնել և անպատասխանատու քարոզիչների վերարկուն հագնել: Նրանք չը կարողացան կամ չը ցանկացան հասկանալ, որ խաղաղ քարոզութիւնը նպատակայարմար է և կարող է օգտաւէտ լինել այնպիսի պայմաններում, որտեղ մարդիկ ապրում են իրանց սովորական կեանքով. նրանք մոռացան, որ ամեն օր, ամեն ժամ մարդիկ են կոտորվում, գիւղեր են այրվում, որ այդպիսի ժամանակներում, քարոզը—«գայլի գլխին՝ աւետարան կարդալ կը նշանակէ, որ կռուի միջոցին ամեն մի անկեղծ յեղափոխական կազմակերպութեան սրբազան պարտականութիւնն է դրականապէս որոշել իր դիրքը և առանց տատանման անցնել այս կամ այն կռուողների շարքը, կամ խոստովանել իր Թուլութիւնը, անպատրաստականութիւնը և չը բարդացնել հարցը զանազան սոփեստութիւններով և տակտիկական անբարեխղճութիւններով:

5) Իսկ հայ ժողովուրդը, խաղաղ ու անզէն հայ ժողովուրդը, որ ապշած չէր հասկանում՝ ինչ է կատարվում իր շուրջը... Ի՞նչ պէտք է գրէ ապագայ պատմաբանը այդ ժողովրդի մասին: Ամենից առաջ կը գրէ, որ հայ ժողովուրդը կոտորածները սկզբում ընդունեց իբրև մէկը այն սոսկալի պատուհասներից, որ նա պատմականօրէն ունեցել է պարբերաբար, շնորհիւ իր համեմատական Թուլութեան և աշխարհագրական աննպաստ դրութեան: Եւ գուցէ հայ ժողովուրդը այս պատուհասն էլ տանէր անտրտունջ և առանց դիմադրութեան, եթէ Թուրքերը ցոյց չը տային զարհուրելի անխղճութիւններ և եթէ իրանց բռնած դիրքով չը սպառնային բնաջինջ անել ամբողջ հայ ժողովուրդը: Հայ ժողովուրդը հասկացաւ, որ ուզենայ կամ չուզենայ կռուել—այդ մի և նոյն է,—նա պէտք է կոտորվի և Թալանվի և որոշեց կռուել ու պաշտպանվել այն յոյսով թէ գուցէ այդ միջոցով նա կը կարողանայ եթէ ոչ կոտորածի առաջը առնել, գոնէ մասամբ կը հարուածէ իր անաստուած կոտորողին և կը պահպանէ իր ունեցուածքի մի չնչին մասը: Դա յուսահատական դրութիւն էր, որովհետև չէր կարելի լուրջ մտածել կռուի մասին, երբ ժողովուրդը անզէն է, անպատրաստ է և որ գլխաւորն է—բնաւորութեամբ պատերազմասէր չէ:

Հայ-Թուրքական կոտորածներ սարքողները այս բանը շատ լաւ էին հասկանում և հաշուի առնում: Մի Թուրք բժիշկ նոյն իսկ զարմանք էր յայտնում («Каспій» լրագրում), որ հայ ժողովուրդը յանդգնում է զէնքի դիմել ինքնապաշտպանութեան համար. չէ որ մահմեդականների Թիւը Անդրկովկասում երեք անգամ շատ է հայերից (չը հաշուելով 150 միլիօն բէգերը Անդրկովկասից դուրս), նրանք համարեա բոլորը զինված են և տասը տարեկանից բոլորը զինավարժութեամբ են պարապում. իսկ ինչ են հայերը—անզէն, վախկոտ և չարչի ժողովուրդ, որը պէտք է ընկճվի զէնքի ուժի առջև և ապրէ ստրկի դրութեան մէջ ի փառս և ի բարեկեցութիւն մեր բարեխնամ հարևան Թուրքերի, որոնց նախնիքը եղել են մեր տէրերը: Խեղճ բժիշկը մոռացել էր, որ ժամանակները փոխվել են, ստրկութիւնը իր ֆէօդալական ձևերով այժմ այլ ևս չէ կարելի վերականգնեցնել, որ հայ ժողովրդի համբերութիւնն էլ կարող է հատնել և նա իր յուսահատական ճիգերի մէջ հերոսութեան և անձնազոհութեան այնպիսի օրինակներ կը տայ, որոնք կը ստիպեն Թուրք աւազակ օրգաններին հանդիստ Թողնել այդ մի բուռ խաղաղ ժողովրդին:

Կը հասնի արդեօք հայ ժողովրդի համար այս երջանիկ դրութիւնը թէ ոչ—դրա մասին կը գրէ ապագայ պատմաբանը. բայց որ հայը այլ ևս ուրիշ ճանապարհ չունի, բացի հերոսութեան և անձնազոհութեան ճանապարհից—այդ անհերքելի է:

Այժմ դրութիւնը այսպէս է:

Կառավարութիւնը ոչ մի անկեղծութիւն չէ ցոյց տալիս վերջ դնելու հայ-Թուրքական պայքարին:

Թուրքերը շարունակում են կոտորել, այրել և Թալանել. և քանի որ դեռ Թալանելու բան կայ հայերի մօտ—նրանք տրամադիր չեն լինի վերջ տալու այդ եղեռնագործութիւններին:

Հայ ժողովուրդը «Դաշնակցութեան» ղեկավարութեամբ պաշտպանվում է Թուրքերի յարձակումների դէմ:

Վերջին ժամանակներս շատ են խօսել հայերի փոխադարձ յարձակումների մասին: Բայց դա բոլորովին ճիշդ չէ. հայերը երբէք պաշտպանողական դիրքից դուրս չեն եկել և չեն էլ գայ, որովհետև նրանք աննպատակ և վնասակար են համարում տեղ կռիւը իրանց համար: Պէտք է արդար լինել և հասկանալ՝ ինչ է նշանակում յարձակողական և պաշտպանողական դրութիւններ մի այսպիսի ժողովրդական աղէտաւոր պայքարի ժամանակ: Թուրքերը ջոկում են միշտ հայերի ամենաԹոյլ, մեկուսացած և անպաշտպան գիւղերը և յանկարծակի յարձակվում նրանց վրա. դրանով և բացատրվում է նրանց մշտական աջողութիւնը առաջին հարուածներում: Շատ քիչ է պատահել, որ հարևան հայ գիւղերը այդպիսի դէպքերում կարողանան օգնութեան հասնել յարձակման ենթարկված գիւղին և հետևանքը լինում է մի ամբողջ գիւղի կործանումը բաւականաչափ մարդկանց զոհերով: Հայերը երկար ժամանակ խոնարհվում էին այդ վիրաւոր դրութեան առաջ և չէին մտածում վրէժխնդրութեան մասին, հաւատալով որ կամ Թուրքերը խղճի կը գան, կամ կառավարութիւնը խելքի կը բերէ նրանց. բայց ի զուր. ոչ մարդասպաններն էին պատժվում և ոչ Թալանած իրերը վերադարձվում:

Հայերի զինուորական ոյժը շատ չնչին է, որ կարելի է զինել բոլոր հայ գիւղերը, պահապաններ դնել ամեն մի ճամբորդի հետ ամեն մի հովուի կամ վարուցանքս անողի մօտ. ինքնապաշտպանութիւն այդ մտքով անհնարին է նոյն իսկ ամենամեծ և ուժեղ պետութեան համար: Եւ վերջապէս, ինչ կը նշանակէ զինել մի գիւղ, երբ նրա վրա գալիս են 5—6 գիւղի զինված տղամարդիկ: Ի հարկէ, այդպիսի դէպքերում մնում է միայն, որ հայ գիւղերն էլ հաւաքվեն ու յարձակվեն այն Թուրք գիւղերի վրա, որոնք յարձակվել ու Թալանել էին անպաշտպան հայ գիւղը և աշխատեն Թալանը վերադարձնել ու պատժել ոճրագործներին: Սա լոկ ինքնապաշտպանութիւն է և հայերը ուրիշ տեսակ ինքնապաշտպանութիւն չեն կարող ունենալ:

Ով կարծում է թէ սրանով հայերը մտնում են յարձակողական դրութեան մէջ,—չարաչար սխալվում է և անտեղեակ է իրերի դրութեան:

Հայերը երբէք չեն յարձակվել և չեն յարձակվի այն Թուրք գիւղերի վրա, որքան էլ սրանք անպաշտպան լինեն, եթէ այդ գիւղերը նախապէս Թշնամական գործողութիւններ չեն ունեցել դէպի հայերը:

Բայց ո՞ւր է տանում մեզ այս բոլորը և ե՞րբ պէտք է վերջ դրվի այս անմիտ արիւնհեղութեան:

Այս օրերս պէտք է փոխարքայի մօտ գումարվեն հայ և Թուրք պատգամաւորները հաշտութեան պայմաններ մշակելու: Մենք հիասթափված անցեալ փորձերից, չենք կարծում, որ այդ համագումարը կարողանայ առանձին ազդեցութիւն ունենալ իրերի դրութեան վրա, եթէ կառավարութիւնը անկեղծօրէն չը ցանկանայ վերջ տալ կոտորածներին: Իսկ վերջ տալ կոտորածներին կարելի է միայն այն ժամանակ, երբ նա Թնդանօթները կը դարձնէ այն գազանային որջերի վրա, որտեղից անընդհատ են առնում կոտորածների գարշելի հերոսները և ոչ այն տների վրա, որտեղից գցվում են պրօվօկատօրական ռումբեր կամ հրացանաձգութիւններ, երբ կառավարութիւնը կը դադարի զինաթափ անել այն հայ կտրիճներին և գիւղերին, որոնք իրանց կեանքի գնով մարդասիրական բարձր օրինակներ են տալիս, պաշտպանելով հայ ժողովրդի կեանքը և գոյքը:

Եւ կառավարութիւնը այդպէս պէտք է վարվի, որովհետև հայ ժողովուրդը այս րոպէիս մի ճիչ է բարձրացնում, մի իրաւունք է պահանջում—այդ իր երկրում հանգիստ ապրելու իրաւունքն է։

Արդէօք պէտք է հասկանան նրանք, որոնց անհրաժեշտ է հասկանալ այս մարդկային սրբազան իրաւունքի մինիմալ պահանջը և պէտք է կարողանա՞ն արդեօք նրանք չը սըրբապղծել զանազան քաղաքական միտումներով այդ մարդկային իրաւունքների «սրբութիւն սրբոցը»։

Չը պէտք է մոռանալ, որ եթէ հայ-թուրքական ջարդերը այսպէս շարունակվեն—հեռու չէ այն օրը, երբ ամեն մի հայ և թուրք միմեանց պատահելիս պէտք է աշխատեն իրար ոչնչացնել։

Սա արդէն կոնֆլիկտ չէ և ոչ իսկ պատերազմ։

Սա մի դիւային պարախաղ է, որ ընդունակ է նոյն իսկ Մեֆիստոֆելի քրքիջը կասեցնել։

Յոյս դնել կռւող կողմերի խելահասութեան կամ յոգնածութեան վրա այլ ևս չէ կարելի. չափազանց շատ վէրքեր են բացվել մարդկանց սրտերի մէջ—խոր և անբուժելի վէրքեր—որ կարելի լինի սպասել, թէ կռւողը սառնասրտութիւն կունենայ նախապէս քննելու իր անելիքները։ Կռւողը գտնվում է կրքի, էքստազի ազդեցութեան տակ, և սա զարհուրելի է դարձնում դրութիւնը։

Ծանր և պատասխանատու դեր է տուած հայ-թուրքական համագումարի պատգամաւորներին։

Ի՞նչպէս պէտք է վճռեն նրանք երկրի խաղաղացման հարցը։

Ամեն մի պատմական լուրջ հիւանդութիւն ունենում է միայն մի իսկական բուժիչ միջոց, միւս միջոցները լինում են սոսկ պալիատիվներ, որոնք մեղմացուցիչ նշանակութիւն կարող են ունենալ միայն։ Մինչև օրս այդ պալիատիվներով շատ աշխատեցինք վերջ տալ ջարդերին, և ինչ, ժամանակաւորապէս մեղմանում էին նրանք, յետոյ աւելի տաքանում, աւելի սարսափելի դառնում։

Ժամանակ է և պէտք է այժմ դիմել այն միակ միջոցին, որը կարող է վերջ տալ կոտորածներին։ Այդ միակ միջոցը կռւող ազգերի տէրրիտօրիական առանձնացման, բաժանման խնդրի շուտափոյթ և բաւարար լուծումն է, որը կատարվում է այժմ կռւով ու արիւնալի զոհերով և որը պէտք է կատարել առանց կռւի և առանց զոհաբերութիւնների։

Ահա այն միակ և լուրջ խնդիրը, որը դըրված պէտք է լինի հայ-թուրքական պատգամաւորների առջև, որի արդարացի լուծումը կարող կը լինի հանգստացնել մեր երկիրը։

Եթէ դեռ ևս կան մարդիկ, որոնք անհնարին են գտնում այդ խնդրի բաւարար լուծումը,—մենք ի պատասխան նրանց դարձեալ կը շեշտենք այն հանգամանքի վրա, որ ներկայումս այդ բաժանումը արդէն իրականանում է կեանքում. ճիշտ է՝ նա իրականանում է դանդաղ, վիժմունքով և սարսափելի արիւնհոսութեամբ, բայց հէնց մեր պատգամաւորների պարտականութիւնն էլ նրանումն է կայանում, որ նրանք հարցի բնական լուծումը իրականացնեն արագ և առանց արիւնհեղութեան։

Պէտք է հասկանալ, որ այլ ևս չէ կարելի հայ ու թուրք գիւղացիներին ապրել միասին, մի գիւղում, չէ կարելի թողնել հատ-հատ հայ գիւղեր տասնեակ թուրք գիւղերի մէջ և հակառակը՝ մի թուրք գիւղ տասնեակ հայ գիւղերով շրջապատված։

Ցանկանանք աջողութիւն հայ-թուրքական համագումարին։

Մ. Շ.

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ ԵՒ ՖԵԴԵՐԱՑԻԱ

V

Անցեալ յօդուածի չորս հատուածներում մենք ակներև պարզութեամբ ապացուցեցինք, որ այն բոլոր երկրներում, ուր տիրում է վարչական ցենտրալիզացիա կամ կենտրոնացում—անպայման գոյութիւն ունի և անպատճառ պէտք է ունենար բիւրօկրատիա։ Իսկ այն երկիրները, որոնց ներքին վարչական սիստէմն ապակենտրոնացումն է—ազատ են բիւրօկրատիայից։

Մենք այդ ապացուցեցինք պ. Բ. Իշխանեանին։ Բայց խոմ մեր յօդուածի նպատակը չէ՞ր համոզել պ. Իշխանեանին, այս կամ այն ճըշմարտութիւնը ցոյց տալ նրան, կամ հաստատել, որ նա ծանօթ չէ այս ու այն խնդրի հետ և ապլոմբով խօսում, վիճում է։ Ո՛չ, եթէ դա լինէր լրագրական բանակռւի նպատակը, ես գրիչ անգամ չէի վերցնի։ Մենք խոմ քաղցած ձիեր չենք, որ իրար հետ մրցենք, կամ իրար յաղթահարենք։ Լրագրական պօլեմիկայից պէտք է օգուտ ստանայ ընթերցող հասարակութիւնը, եթէ ոչ այդ պօլեմիկան կը դառնայ լոկ հայհոյաբանութիւն, մրցութեան մի կրկէս և աւելի ոչինչ։

Ահա ընթերցող հասարակութեան այդ օգուտն աչքի առաջ ունենալով, մենք աւելորդ չենք համարում համառօտակի պարզել բիւրօկրատիայի պատմական ծագումը և նրա խաղացած դերը, որպէս զի դրանով նպաստած լինենք վիճելի հարցի բազմակողմանի պարզըման և ապա հնար ունենանք անցնելու ֆեդերալիզմի գաղափարին։

VI

Արևմտեան Եւրօպայի երկրներում ամենից առաջ բիւրօկրատիան կազմակերպվել և որոշ ձև է ստացել Ֆրանսիայում։ Նրա ծագումը խոնարհ, շատ խոնարհ է եղել։

Միջին դարերում արևմտեան եւրօպական երկրներում տիրում էր աւատական կազմը կամ ֆէօդալականութիւնը։ Ամեն մի երկիր ունէր մի թագաւոր, բայց նա միայն անունով էր թագաւոր։ Նա ոչ այլ ինչ էր, եթէ ոչ մի հողատէր իշխան միւս իշխանների շարքում։ Յաճախ լինում էին այնպիսի թագաւորներ, որոնք աւելի քիչ հող ու հպատակներ կամ ճորտեր էին ունենում, քան նրա վասալները կամ աւատական իշխանները։

Բայց միջին դարերի վերջերում թագաւորների իշխանութիւնն սկսեց աստիճանաբար ամրապնդվել։ Աճող ու բազմացող քաղաքների կամ «բիւրգերի» բնակիչները, որոնք յաւիտենապէս հալածվում ու կողոպտվում էին աւատական իշխաններից ու մանր ասպետներից, թեքվեցին թագաւորների կողմը, իսկ թագաւորները մշտական մրցման մէջ էին ազնուականների հետ։ Արքայական իշխանութիւնը միշտ ձգտում էր տիրել, հպատակեցնել, կլանել մանր ու խոշոր ֆէօդալներին, իսկ վերջիններս ձգտում էին թուլացնել ու մշտապէս ջլատել արքաների ուժը, որպէս զի իրանք չը զրկվեն իրանց անսահման իրաւունքներից։

«Բիւրգերի» կամ միջնադարեան քաղաքների բնակիչները (բուրժուաները) անցան թագաւորների կողմը. նրանց շահերը պահանջում էին, որ ֆէօդալները զսպվեն, որ ամբողջ երկրում գոյութիւն ունենայ մի տէր, մի իշխանութիւն։

«Հարիւր սրբերի աղօթելու փոխարէն՝ լաւ է աղերսել մի Աստծու», ասում է առածը։

Տնտեսական կեանքի զարգացումը, «բիւրգերների» յարաճուն շահերը քանի գնում աւելի լայն ասպարէզ էին պահանջում իրանց համար. իսկ ֆէօդալականութիւնը դէմ էր դրան. նա ներկայացուցիչ էր ուրիշ տեսակ շահերի—նրան ոչ միայն ձեռնտու էր մանր ու փշրված աւատական վարչական ու քաղաքական սիստէմը, այլ և դա անհրաժեշտ պայման էր ճորտատէր աւատական ազնուականութեան համար։ Առանց այդ կազմի նրանք նման կը լինէին ջրից հանած ձկների...

Բուրժուազիան և կենտրոնական իշխանութիւնը ձեռք ձեռքի տուին։

Քանի առաջ էին գնում կենտրոնական իշխանութեան նուաճումները, քանի աւելի ենթարկվում էին թագաւորներին ֆէօդալներն ու ասպետները, ֆիւրստերն ու ֆէօդալական գերցոգները, այնքան աւելի արքան պէտք էր ունենում հաւատարիմ, վստահելի անձերի—իր համար անձնական գործակալների կամ էմիսարների։ Բայց այդ արքայական գործակալները պէտք է լինէին այնպիսի դասակարգից, որի շահերը նման չը լինէին յաղթահարված և աստիճանաբար յաղթահարվող ֆէօդալների շահերին։ Այդպիսի դասակարգեր երկուսն էին—«բիւրգերները» կամ բուրժուազիան և գիւղացիները կամ ճորտերը։ Վերջիններիս թև տալ, խրախուսել դեռ ևս ձեռնտու չէր կենտրոնական իշխանութեան համար, որովհետև արքան էլ մի խոշոր ճորտատէր էր։ Ուրեմն մնում էին բիւրգերները։ Եւ արքան իր գործակալները ջոկում էր կրթված ու ճարպիկ քաղաքացի դասակարգից։

Կենտրոնական իշխանութեան այդ ներկայացուցիչները գնում էին գաւառ և վերահսկում, պաշտպանում, հանդիսանում վճռապետ, կենտրոնական իշխանութեան կամ արքայի շահերի։ Նրանք նախանձախնդրօրէն հսկում էին, որ ֆէօդալական իշխանները մի մազ անգամ չը գնան իրանց կրճատված և կրճատվող իրաւունքներից։

Գաւառներից սկսեցին անթիւ զեկուցագրեր թափվել մայրաքաղաք, արքայի դիւանը, իսկ արքայական դիւանից սկսեցին թղթեր—հրամաններ, հրահանգներ տեղալ դէպի գաւառներն ամեն ուղղութեամբ։

Ահա բիւրօկրատիայի սկիզբը, նրա ծնունդը։ Այդ գործակալներն սկսեցին ստանալ զանազան անուններ և տարբեր չափերով ռոճիկներ։ Նրանք դարձան հէնց գործիք կենտրոնական իշխանութեան ձեռքին և սկսեցին աստիճանաբար խեղդել, ճնշել ու քայքայել բոլոր գաւառական, տեղական և այլ ինքնուրոյնութիւնները։ Բայց դրա հետ միասին՝ այդ պաշտօնեաներն սկսեցին կամաց—կամաց բազմանալ, կազմել մի ամբողջ դաս, նոյն իսկ որոշ կաստայական բնաւորութիւն ստացան՝ ձգտելով քաղացման։ Նրանք սկսեցին իրանց ձեռքն առնել գաւառների բոլոր գործերը և վարել նրանց՝ համաձայն վերեւից ստացված հրամանների։ Բայց որովհետև «վերևը», այսինքն «կենտրոնում» նստած իշխանութիւնը Եհովայի նման ամենատես, ամենագէտ չէ, այդ պատճառով բիւրօկրատիան կամաց—կամաց երես առաւ, այսինքն՝ սկսեց ունենալ իր սեփական շահերը և դրանց համեմատ վարել երկրի գործերը։ Ահա դա է որ մտցնում է «բիւրօկրատիա» հասկացողութեան մէջ «կամայականութիւնը»։

Նոր-Դարը բերեց իր հետ բուրժուազիայի հսկայական զարգացումը։ Տնտեսական զարգացումը պահանջում էր ազատ առեւտուր, մաքսային սահմանների և ֆէօդալական կամայականութեան վերացում, երկրի իշխանութեան կենտրոնացում, և դա միայն նրա համար, որ ազատվի երրորդ դասակարգը ֆէօդալականութեան կաշկանդիչ, ազատ զարգացման խանգարող լծից։

Եթէ մի րոպէ երևակայենք, որ ֆէօդալներ չը կան, չը կան մաքսային արգելիչ սահմաններ. եթէ երևակայենք, որ Կոլբէրի ժամանակվայ Ֆրանսիայում ներքին փոխադրութեան, արդիւնագործման և առևտրի դէմ ոչ մի արգելք չը կայ, այն ժամանակ բնականաբար բուրժուազիայի շահերի տեսակէտից բոլորովին մի և նոյնը կը լինէր, թէ արդեօք Իլ-դը-Ֆրանսի թագաւորն է երկրի բացարձակ տէրը, թէ ամեն մի գաւառ վարում է իր բոլոր ներքին հարցերը բոլորովին անկախ արքայի իշխանութիւնից։

Կարդինալ Րիշլիեօի և Մազարինի օրով Ֆրանսիայում իշխանութեան կենտրոնացման գործը պսակաւորվեց, վերջացաւ։ Ֆրանսիան տէր ունէր։ Պարիզը հրամայում էր և բոլոր գաւառները հպատակվում, կատարում էին։ Պարիզը նշանակում էր իր ցանկացած բոլոր գլխաւոր պաշտօնեաներին, իսկ վերջիններս իրանց գաւառի գլխաւոր պաշտօնեաներն իրանք էին նշանակում, սրանք էլ հրաւիրում էին աւելի ստորին պաշտօնեաների և այլն, սակայն ամեն մի հրաւիրման դէպքում փոքր պաշտօնեան «թուղթ էր գրում իրանից մեծին, նա էլ իրանից բարձրին, սա էլ իրանից բարձրին—մինչև որ հասնում էին հիէրարխիական սանդուխին ծայրին—մինիստրին ու թագաւորին։ Սրանք հաստատում էին և հաստատութեան նամակը, ինչ ճանապարհով վերև էր բարձրացել, նոյն ուղիով ներքև էր գալիս։ Ամեն մի գործի համար գրվում էին բազմաթիւ թղթեր։

Այո, «բիւրօկրատիա» գաղափարի հետ սերտ կապված է բազմաթիւ թղթագրութեան և հսկայական արխիվի գաղափարը։ Մինչև օրս էլ Ալժիրիայի մի որ և է գիւղում, կամ Բրետանի մի անկիւն մի կամուրջ շինելու համար պէտք է գրվեն տասնեակներով թղթեր դէպի վերև, դէպի գաւառապետը—մինչև Պարիզ—մինիստրին. տասնեակներով թղթեր պէտք է նոյն ձևով մինիստրութիւնից ներքև իջնեն—մինչև գիւղն ու աւանը, որպէս զի թոյլատրվի ձեռնարկել այդ գործը։ Եւ դա պահանջում է ժամանակ—երբեմն ամիսներ...

Նայեցէք ձեր շուրջը—միթէ նոյնը չէ օրհնեալ մեր երկրում։

Այդպէս չէ Անգլիայում։ Այնտեղ ամեն մի նահանգ, ամեն մի գաւառ, ամեն մի շրջան, ամեն մի գիւղ, գիւղի ներսում էլ ամեն մի համայնք ուժեղ անկախ, ինքնուրոյն է իր բոլոր ներքին վարչական գործերում։ Ճանապարհներ, շէնքեր, դպրոցներ, հիւանդանոցներ, եկեղեցիներ և այլ հազար տեսակ հիմնարկութիւններ կառուցանել, գործեր վճռել—բացարձակ կախված է այն վայրից, որի շահն է պահանջում։ Տարբեր է, երբ հարցը մեծ է, շօշափում է շատ գաւառների ու նահանգների շահեր միաժամանակ. այդ դէպքում միայն կենտրոնական իշխանութեանն է վերապահված լուծումը։

Այդ պատճառով էլ ֆեդերալիստ կազմակերպութիւնները պահանջում են խիստ ապակենտրոնացում, ներքին գործերի վարման մէջ կատարեալ անկախութիւն, ներքին, լոկ տեղական շահերին վերաբերող օրէնքների անկախ հրատարակում, իսկ այն բոլոր հարցերը, որոնք վերաբերում են երկու կամ աւելի գաւառների ու նահանգների՝ նրանք թողնում են կենտրոնական իշխանութեան իրաւասութեանը։

Մասնաւորելով խօսքս Ռուսաստանի ֆեդերալիստ կուսակցութիւններում, կասեմ որ նրանք համապետական ընդհանուր պարլամենտին, կենտրոնական գործադիր իշխանութեանն են թողնում բոլոր զինուորական, հաղորդակցական, մաքսային, պօստ-հեռագրական, արտաքին քաղաքական և այլ գործերը, վերապահելով ներքին բոլոր կուլտուրական ու օրէնսդրական գործերը տեղական իշխանութիւններին։

Դա է բիւրօկրատիայի ձեռքից ազատվելու միակ ուղին։

(Կը շարունակվի)

ՄՈՍԿՎԱՅԻ ԱՐՇԱՒՐՔԻՑ

Մոսկվա, 19 դեկտ. *)

Շատ դժուար է ձեզ համար երևակայել թէ ինչ էր կատարվում Մոսկվայում այս վերջին օրերը։ Ինձ վիճակվեց վկայ լինել սարսափելի տեսարանների և ընկնել ակամայ կերպով վտանգների լաբիրինթոսի մէջ։

Առաջին սարսափները կատարվում էին իմ կացած փողոցի շրջակայքում, Ստրաստնոյ վանքի, Տվերսկայա, Սադովայա և միւս փողոցների զանազան մասերում։

Մեր կացած Բրօննայա և Բօգօսլօվսկի փողոցներում շինված էին շատ տեղերում բարրիկադներ։ Զինուորները մի քանի անգամ զալպեր տուին մեր փողոցներում, մանաւանդ ուսանողական բնակարաններով լի Բօրշչօվի մեծ տան վրա։

Երբ փոքր ինչ հանդարտվեց մեր կողմում, ես վճռեցի տեսնվել ծանօթներիս հետ և այցելեցի ծանօթ մի տիկնոջ, որ կենում էր Պրեսնեա կոչված մասում։ Սակայն անսպասելի կերպով ընկայ մի վտանգի մէջ, որ աւելի մեծ էր, քան մեզ մօտ եղածը։ Փոթորիկը, որ այստեղ բռնկվեց, աւելի ահագին և սարսափելի եղաւ։

Այդտեղ կենտրոնացած էր յեղափոխականների գործունէութիւնը։ Պէտք է նկատել, որ Մոսկվայի բոլոր մասերում կային ընդհարումներ և հրացանաձգութիւններ ամբողջ մի շաբաթվայ ընթացքում։ Բայց այն, ինչ որ կատարվեց Պրեսնեայում, ամենից ուժեղն էր և մահաբերը։

Ամսի 16-ին լոյս 17-ի գիշերը եղաւ ամենածանրը մեր շրջակայքի համար։ Առաւօտեան, մեզ, առանց այն էլ անհանգիստ քնածներիս արթնացրեց, մօտ ժամի 5-ին, երբ Մոսկվայում դեռ բոլորովին մութ է լինում, մի սարսափելի դղրդիւն։ Յանկարծ սկսեցին որոտալ հրացանների ձայներ, թնդանօթի ռմբաձգութիւններ։

Պատուհանները, ի հարկէ, ամենապինդ կերպով փակված էին և մեզնից ոչ ոք փորձ էլ չէր անում բանալու նրանց և դէպի փողոց նայելու, որովհետև կարող էին իսկոյն հարուածներ տեղալ դէպի մեզ։ Մենք ժամանակ ժամանակ բաց էինք անում այն դռները և լուսամուտները, որոնք դէպի բակն էին նայում։

Այդ րոպէներին հրացանաձգութեան և ռմբաձգութեան անդադար միմեանց յաջորդող ձայները և ճարճատիւնները մի ահեղ և սոսկալի տպաւորութիւն էին գործում, խլացնելով մեզ։

Ամբողջ օր շարունակվում էր այդ զինակռիւը, ժամանակ-ժամանակ շատ խիստ արտայայտութիւն ստանալով։ Մենք նախօրօք պատրաստել էինք մոմեր, որպէս զի վտանգի կրիտիքական րոպէին, երբ յարձակում գործեն մեր տան վրա, իջնենք ներքև դէպի նկուղները և այնտեղ պատսպարվենք, որքան ժամանակ հարկաւոր կը լինի։

Մեր տան մօտ գտնվող երկու մեծ տների մէջ հաւաքված էին յեղափոխական զինուորների ստուար խմբեր։ Իսկ փողոցներում ամեն մի 20 քայլի վրա կանգնեցրած էին բարրիկադներ։ Ուսանողներ, բանւորներ, ուսանողուհիներ պաշտպանում էին այդ բարրիկադները։

Մեր մօտ գտնվող Պարալենի փողոցում նոյնպէս շատ կային բարրիկադներ, իսկ տըներում զետեղված էին յեղափոխականները։ Երկու քայլ այն կողմ գտնվում էր Շմիդտի գործարանը, որտեղ յեղափոխականները ամբարել էին մեծ քանակութեամբ ռազմամթերք՝ հրացաններ, փամփուշտներ, պայթուցիկ նիւթեր, ռումբեր։ Այդ գործարանի մօտ էր գտնվում և Պրոխորովի գործարանը, որտեղ բանւորները մեծ պատրաստութիւններ էին տեսել յեղափոխական գործողութիւնների համար։

Մենք ճնշված էինք, որովհետև անզօր վիճակի մէջ էինք, շրջապատված վտանգներով ամեն կողմից։ Փողոց դուրս գալ անկարելի էր։ Նրանք, որոնք փորձում էին դուրս գալ, կամ իսկոյն վերադառնում էին, կամ զոհ էին դառնում բոլորովին անմեղ տեղը։

Ես անձամբ այնքան ընտելացել էի սարսափներին, որ կորցրել էի զգայնութիւնս և տանում էի բոլորը կարծես իբրև բնական երևոյթ։ Բայց երբ մեր չորս կողմը յանկարծ հրդեհվեցին տները և մենք մնացինք կղզիացած մեր տան մէջ, շրջապատված կրակով, զգացինք մի յուսահատական սարսափ։ Հրդեհից լուսաւորված էին փողոցները, կարմրել էր երկինքը և լցվել հրեղէն կայծերով։ Բոցը բարձրանում էր շատ բարձր և ժամից ժամ ուժեղանում։

Վերջապէս կրակի լեզուները սկսեցին ձգվել դէպի մեր տունը և լիզել մեր տան ցանկապատը։ Ազատվել, փախչել անկարելի էր։

Ո՞ւր կարող էինք գնալ։ Դրսում կատարվում էր հրացանաձգութիւն, որ չէր ճանաչում բարեկամի և թշնամու։ Իսկ եթէ տունը կրակվէր, դրութիւնը անելանելի պէտք է դառնար։ Նկուղներում թաքնվելը այլ ևս միտք չունէր, և վտանգաւոր կը լինէր, որովհետև այրված տունը կը փլէր և իր աւերակների տակ կը թաղէր թաքնվածներին։

Մնում էր սպասել և յուսալ բաղդին։

Իսկ շրջակայ տեսարանը ամեն մի րոպէ նոր-նոր աղէտալի դէպքեր էր բացում մեր առաջ։ Հրդեհի միջից լսվում էին պայթուցիկ իրերի բռնկման ձայները, ռումբերի որոտը, այրվող իրերի ճայթիւնը, շինութեան մասերի խորտակումը և շարունակվող հրացանաձգութեան և ռմբաձգութեան թնդիւնները։

Մեր առաջ ձիւնի վրա թափվում էին գնդակներ, պատռված ռումբերի բեկորներ։ Շատերը մեր պատուհաններից ջարդվեցին։

Մենք շարունակեցինք մնալ տանը։ Միևնոյն էր որտեղ մնալ—փողոցում թէ տանը։ Բայց բաղդը ժպտաց և մենք կենդանի մնացինք։

Հրդեհը մեզ չը դիպաւ։

Իսկ յետոյ և զէնքի շառաչիւնը թուլացաւ։

Օրհասական պայքարից յետոյ յեղափոխականները ընկճվեցին։

Խաղաղութիւնը սկսեց հանգստացնել բոլորին, բայց ինչ, սարսափելի զոհերից յետոյ։ Շմիդտի մեբելի գործարանում 130 մարդ գտնվեցին վիրաւոր և մեռած. բայց կային շատերը, որոնց չը կարողացան գտնել։

Պրոխորովի գործարանում նոյնպէս շատ մեծ աւերումներ տեղի ունեցան և զոհեր եղան։ Ինքը գործարանատէրը թաքնվել էր նկուղում իր ընտանիքի հետ միասին։ Նրա կինը իր նորածին 7 օրական զաւակով, հիւանդ վիճակի մէջ, գտնվում էր մշտական վտանգի մէջ։ Սակայն նրանք անվնաս ազատվեցին։

Ես գրում եմ միայն այն, ինչ որ մեր առաջ և մեր մօտ կատարվեց։ Իսկ այնուհետև, երբ տեսնվեցի ընկեր ուսանողուհիների, ուսանողների և ծանօթներիս հետ, շատ ու շատ բաներ լսեցի հետաքրքրական մանրամասնութիւններով։ Նըրանք այնքան բազմազան են և առատ, որ անկարող եմ համառօտ նամակի մէջ ամփոփել։

Շատ հետաքրքրական և բնորոշ միջնադէպեր չեն յիշատակվիլ մամուլի էջերում. նըրանք պատմվում են և անցնում բերանէ բերան։

Իզաբելլա Քալանթար

---

1) Նամակը ստացվել է միայն անցեալ օր յունվարի 13-ին։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՊԱՏՃԱՌՆԵՐ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐ

(Շարունակութիւն)

II

Կան ողբալի թիւրիմացութիւններ, նախապաշարումներ հայ ժողովրդի, ցեղի նկատմամբ, որոնք բերնէ բերան, երկրէ երկիր տարածվելով, ստեղծում են որոշ շրջաններում անպաստ, նոյնիսկ թշնամական տրամադրութիւններ դէպի հայութիւնը, նրա իդէալները, նրա պաշտպանած դատը, նրա մղած պայքարը։

Այդպիսի այլանդակ նախապաշարումներից է այն վայրի-վերոյ յայտարարութիւնը՝ թէ հայկական շարժումը, տոգորված մոլեռանդ նացիօնալիզմով, ձգտում է անկախ հայկական պետութեան, կամ այն միւս տարածված պարադօքսը, որի համեմատ հայ ժողովուրդը յայտնվում է որպէս շահի ու կեղեքման տենչանքով բռնված, էապէս վաշխառու, առևտրական մի տարր։

Թուրք բուրժուազիայի և մահմեդական ֆանատիկոսութեան իդէօլոգները ճարպիկ կերպով կարողացան շահագործել հայ յեղափոխութիւնն ու համօր հայութիւնը վարկաբեկող այդ թիւրիմացութիւնները։ Նրանք հնչեցրին ահազանգը հայ հարստահարիչ դրամագլխի «ոտնձգութիւնների» դէմ, նրանք տարածեցին առասպելներ հայկական կոմիտէի, նրա երևակայական շահատակութիւնների ու դաւերի մասին։ Նրանք ամեն առթիւ, առանց այն էլ կասկածամիտ ու հայատեաց բիւրօկրատիայի առջև, շեշտեցին հայի «սեպարատիզմը», հայ յեղափոխականի անզիջական, ազգայնամոլ ձգտումները։ Նրանք ի ցոյց դրին հայ գործիչին, որպէս ամբարիշտ, ֆանատիկոս մի տիպ, որ թունաւոր ատելութիւն միայն ունի դէպի դրացի ժողովուրդները, մասնաւորապէս դէպի թուրքութիւնը։

Եւ այդ առասպելներն ու ինսինուացիաները ըստ երևոյթին հաճելի էին մեր միւս դրացիներին, նոյն իսկ արմատական ներկայացուցիչներին, ռուս ու վրացի որոշ կարգի սօցիալ-դէմօկրատներին, որոնք փութկոտութեամբ ձեռք առան Աղայէֆների թէզիսները և աղմկեցին մթնոլորտը մարտական լօզունգներով—«Հայ նացիօնալիզմի դէմ», «հայ առանձնացման դէմ», «Դաշնակցութեան դէմ»։

Թուրք իդէօլոգների, պանիսլամիզմի աւազանում մկրտված թուրք ագիտատորների հակահայկական ու հակայեղափոխական այդ տրամադրութիւնը բղխում էր, անտարակոյս, մասամբ հեռաւոր իրողութիւններից,—բղխում էր այն մեծ, ազատագրական պայքարից, որ հայ մարտական կազմակերպութիւնը տասն և հինգ տարուց ի վեր մղում է Տաճկաստանում, բըռնակալ մի տիրապետութեան դէմ, հերոսական անձնուիրութեամբ ու անօրինակ զոհողութիւններով...

Դժուար է, այո, պահանջել Աղայէֆներից մի վայրկեան թօթափել ցեղա-կրօնական ազգակցութեան ու սուլթանական բռնութեան կուլտը և հասկանալ, գնահատել հայ մարտիկի հոգեբանութիւնը, նրա հերոսական պայքարի իմաստը. դժուար է պահանջել այդ մասոր ներքիններից նոյնիսկ տարրական ծանօթութիւնը՝ պատմական փաստերի, հայ քաղաքական կուսակցութեան ծրագրի, նրա տակտիկի և սկզբունքների, նրա առաջադրած maximum պահանջների և այլն։ Բայց մեզ թւում է, որ այդքան ծանօթութիւն կարող էինք պահանջել վրացի և ռուս սօցիալ-դէմօկրատներից, առաւել ևս սրանց հայ համախոհներից, որոնք օրթոդօքսութեան մէջ յետ չը մնալու համար, նոյնպէս երբեմն-երբեմն հրապարակ են գալիս կովկասեան մամուլի մէջ, պատրաստ կատէգօրիկ յայտնութիւններով, ուր գրեթէ բոլոր պատուհասների մեղքը գցում են հայկական կապիտալիզմի ու նացիօնալիզմի վրա։ Հասկացողութիւնները խեղաթիւրվում են և ապացոյցների տեղ դուք տեսնում էք միայն պարադօքսների ու պատուական բամբասանքների մի տարափ...

Հայ յեղափոխութիւնը սեպարատիստ։ Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը՝ ազգային առանձնացման ջատագով, ազգերի համերաշխութեան հակառակորդ, կռւի ու ատելութեան սերմանող... Բայց ո՞վ է տասնհինգ տարուց ի վեր Տաճկաստանի մռայլ հորիզոններում համերաշխութեան քարոզ հնչեցնողը, քրդին ու տաճկին համերաշխ կռւի հրաւիրողը, ո՞վ է, որ իր օրգանների մէջ, երկար տարիների ընթացքում արծարծել է խաղաղ համայնակեցութեան գաղափարը ամենայայտնի համայնքների միջև, մեղադրել է միշտ—հայկական անծայր ողբերգութեան մէջ—միմիայն սուլթանական բռնակալութիւնը և միշտ արդարացման քօղ է տուել թուրք ժողովրդին, չը նայած վերջինի ուղղակի մեղսակցութեան, նրա հայակեր ֆանատիկոսութեան բռնկումներին...

Անցեալ դարն, հիսաթափեցնող փորձերն այդ ուղղութեամբ չէին վհատեցնում հայ յեղափոխական կազմակերպութիւնը և ահա վերջին, 1904-ի Ընդհանուր Ժողովը, տոգորված նոյն համերաշխութեան ոգով, միաձայն որոշում է՝

«Շարունակել թիւրքահպատակ այլ և այլ տարրերու հետ (քիւրդ, տաճիկ, ասորի, լիբանանցի, մակեդոնացի և այլն) համերաշխ գործակցութեան տակտիկը, որով մինչև օրս ղեկավարված է Դաշնակցութիւնը՝ յանձնարարելով բոլոր պատասխանատու մարմիններուն, բիւրոներուն ու կենտրոնական կոմիտէներուն, ըստ տեղական հանգամանքի, գործնականապէս մշակել բաղձալի մերձեցումի պահանջը այդ տարրերու հետ։»

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը քանի՜ քանի՜ անգամ համերաշխութեան յորդորներ է ուղղել նոյնիսկ Երիտասարդ Թիւրքերին, քանիցս փորձել է միանալ նրանց հետ, ծրագիրներ են կազմվել, համաձայնութիւն է կնքվել որոշ յեղափոխական ձեռնարկների շուրջը, բայց և միշտ վիժել են այդ չարաբաստիկ էքսպերիմենտները, շնորհիւ տաճիկ յեղափոխականների բարոյական հեղգութեան, գաղափարական նկարագրի և թըռիչքների բացակայութեան։

Նոյն համերաշխութեան կոչերը չե՞ն ուղղվել և կովկասեան թուրքերին... Տասնեակ տարիների ընթացքում նոյն իսկ հայկական լիբերալիզմ չէ՞, որ յանձին Արծրունու և իր ֆալանգայի, սիստէմատիկաբար համերաշխ, եղբայրական գործակցութեան է հրաւիրել մահմեդական տարրը, խաղաղ, կուլտուրական ասպարէզում։ Հետևանքը... Այս՞ է արդեօք հայ նացիօնալիզմը, սօցիալ-դէմօկրատական «Պրօլետարի»-ի հռչակած «ազգային առանձնացումը»...

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը համաձայնութեան դաշն է կնքում Տաճկաստանում՝ մակեդօնացիների հետ, Ռուսաստանում՝ ռուս և վրացի, լեհ ու ֆինլանդացի յեղափոխական սօցիալիստների հետ՝ ընդհանուր ուժերով պայքարելու բռնապետութեան դէմ և իրագործելու ամենալայն ռամկավարական ազատութիւններ։

«Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը առաջադրել է տաճկահայկական իր ծրագրի մէջ՝ ոչ զուտ ազգային, այլ տէրրիտօրիական ինքնավարութիւն, որի բարիքները պիտի վայելեն հաւասարապէս ազատ հայ նահանգների բոլոր համայնքները, առանց խտրութեան ցեղի և կրօնի։ «Նացիօնալիստ» հայ կուսակցութիւնը, դեռ տասնհինգ տարի սրանից առաջ, մտցրել է նոյն ծրագրում ռամկավարութեան և սօցիալիզմի գաղափարները, ծանուցել է աշխատաւոր դասակարգի գալոց յաղթանակը, արծարծել է այդ գաղափարները իր հրատարակութիւնների մէջ—ինտելիգենտ տարրերի համար—և այդ այն ժամանակ, երբ հայրենիքում հալածվողների ճիչը և կռւի շռինդը միակ ցաւոտ այժմէութիւնն էին։

Եւ, համաձայն կուսակցութեան սկզբունքներին, նրա լայն, միջազգայնական դաւանանքին, Դաշնակցութեան ֆէդայիները Տաճկահայաստանում իրանց երկարամեայ փոթորկոտ կռիւներում թուրք կառավարութեան և քրդական հրոսակների դէմ՝ ունեցել են միշտ գաղափարական զինուորներին յատուկ վեհանձնութիւնը՝ խնայել թոյլերին ու անմեղներին—կանանց, ծերերին, երեխաներին—մի մարդասիրութիւն, որ նրանք երբեք չեն տեսել իրանց անհոգի թշնամիների մէջ... Նոյն տակտիկով է ղեկավարվում Դաշնակցութիւնը և ներկայ կովկասեան տագնապի միջոցին, թուրքերի դէմ ուղղած ինքնապաշտպանութեան կռւում։ Նա բարբարոսի փոքրոգութեամբ զրոհ չէ տալիս հակառակորդի դէմ այն վայրերում, ուր վերջինը կազմում է աննշան փոքրամասնութիւն, նա տրամադիր չէ փոխառնելու դրացու նախապատմական կռւի մեթոդը և ծուատված դիակների շուրջը դիւային խրախճանքներ սարքելու... Չերկարացնենք։

Նացիօնալիստ հայ կուսակցութեան Խորհուրդը, վերջապէս,—առաջին հեղինակաւոր մարմինը Ընդհանուր Ժողովից յետոյ—մշակեց տարվայ ընթացքում ռուսական Հայաստանի համար գործունէութեան մի նախագիծ, հիմնված մի կողմից՝ կովկասեան ազատ ինքնավար ազգերի դաշնակցութեան, միւս կողմից՝ սօցիալիստական միջազգային կօնգրէսների հիմնական սկզբունքների վրա։

Ահա «Դաշնակցութեան» նացիօնալիզմը։ Ահա թէ ինչպէս են հրապարակ նետվում—ինչպիսի աններելի թեթևամտութեամբ—ամենածանր ամբաստանութիւնները մի կազմակերպութեան դէմ, որ իր դերն ունի տանջվող ու ազատագրվող մի ժողովրդի պատմութեան մէջ։

Ա՛հ, անտարակոյս, բամբասանքի ու ինսինուացիայի հերոսները, որ հետամուտ են դաշնակցականների ամենաաննշան արարքներին անգամ և որ անսովոր փութկոտութիւն են ցոյց տալիս՝ այդ արարքները յաղթական ձևերով հանրային ուշադրութեանը մատնելու համար, չեն համակերպի անգամ ամենայստակ փաստերի առջև, նրանք կը յիշեն ձեզ այս ինչ միջադէպը, այն ինչ անկանոն, դատապարտելի քայլը, կատարված կուսակցութեան այս կամ այն անդամի կամ խմբի կողմից։ Նրանք կը յիշեն դաշնակցական նացիօնալիզմի ու շօվինիզմի այս կամ այն հակադարձ շարժումները թէկուզ հէնց վերջին երեք տարվայ ընթացքում, եկեղեցական գոյքերի յափշտակման, ցարիզմի ու թուրք խուժանի արշաւանքների միջոցին.., բայց ո՞ւմ կը զարմացնեն նրանք, ո՞ւմ կարող են զարմացնել նոյնիսկ ծայրայեղ նացիօնալիզմի այդ մասնակի արտայայտութիւնները մի էպօխայում՝ երբ հայը իր շուրջը տեսնում է միայն արիւն ու արհաւիրք, երբ դրակոնական, բացառիկ օրէնքները բոլոր թափով նրա վրա են ծանրանում, երբ նրա գոյութեան դէմ, նրա հաւաքական, ցեղային գոյութեան դէմ դաւեր է նիւթում բոլոր սև ուժերի դաշնակցութիւնը, երբ երեկվայ խաղաղ ու անզօր կարծված հայրենիքում բռնաբարում են նրա ամենանուիրական սրբութիւնները, աւերում ներկում եկեղեցիների գաւիթները, կոզակների սուինների տակ տալիս կանանց և երեխաներին. երբ լանկթեմուրական արշաւանքը ուրուականի պէս պայթում է անզէն ժողովրդի վրա, անապատ դարձնում հայի արիւն-քրտինքով մշակված շէն վայրերը, չորս կողմը սփռում դիակների կոյտեր, կսկիծ ու հառաչանք, նզովք ու ցասում,—և երբ արիւնալի այդ քաոսի մէջ, բռնութիւնների, լացի ու փախի այդ հսկայական տարտարոսում չը կայ ոչ մէկը, որ գէթ կարեկցութեամբ ձեռք մեկնէ անարգ, հրէշային դաւադրութեան զոհերին, երբ շրջապատող հասարակութիւնները ընդհանուր առմամբ անզգայ հանդիսատեսի դեր են կատարում և նոյն իսկ՝ լռելեայն կամ բացարձակօրէն՝ մեղադրում են զոհին, փառաբանում դահճին... Ասացէք, խնդրեմ, ո՞ր խելահաս մարդ կարող է քար նետել այն երիտասարդի վրա, որը անհնարին զայրագնութեան մէջ, այս կամ այն դէպքում, այս կամ այն առթիւ—թէկուզ հէնց յեղափոխական դրօշակի տակ—բուռն, ծայրայեղ արտայայտութիւն է տալիս իր շատ բնական հայրենասիրութեան...

Հայահալած չարակամութիւնը սահման չունի։ Հայի ինքնապաշտպանութեան քայլերն անգամ աններելի յանցանք եղան կովկասեան հայատեաց արէօպագի աչքում։ Յիշեցէք, ընթերցող, թէ որպիսի թշնամանք ու ցասում յայտնեցին վրացի և թուրք շօվինիստները Նախիջևանի սպանութեան առթիւ, ինչպիսի անպատկառ ցոյցեր եղան հայերի դէմ։ Հնաւանդ, վայրենի ատելութիւնը չէր կարող մարսել, որ երեկվայ հլու «ռայան» կարողանար այնքան սասանեցուցիչ ձևերով պատժել իր ժողովրդի դահիճներին։ Նրանք չէին կարող մարսել և ուրիշ մի շարք տէրօրական ակտեր, որ Դաշնակցութիւնը ի գործ դրեց—ընդհանուր մասսային շարժման հետ միասին—իբրև անհրաժեշտ պրեվանցիվներ, իբրև կանխիչ և միանգամայն վրէժխնդիր միջոցներ, որոնք նպատակ ունէին ըստ կարելւոյն նուազեցնել սարսափների, կառավարչական տէրօրների կրկնողութեան հնարաւորութիւնը։ Հայը համարձակվում է պաշտպանվե՜լ, դժոխք և անէծք,—ոռնում էր մարդախոշոշ արէօպագը...

Cet animal est méchant
Quand on l'attaque, il se défend.

Եւ զայրանում ու զարկում են ահազանգը հայի մեղապարտ յանդգնութեան դէմ. ռումբերն ու տէրրօրը ենթարկվում են թուրք աղաների ու մոլլաների, վրաց պորտաբոյծ ազնուականութեան շանթարձակ անաթեմաներին, որոնք մի անլուր ցինիզմով հնչեցրվում են կովկասեան կառավարչապետի պալատում...

Հայի դրացի ժողովրդների իշխող դասակարգերը այդպիսով ձեռք ձեռքի տուած, մի սըրտառուչ համերաշխութեամբ, հանդիսաւորապէս ստանձնում են մատնիչի դերը և ամբողջ հայ ժողովուրդը դրվում է մեղադրեալ-նստարանի վրա։ Հսկայական, պատմութեան մէջ չը տեսնված օստրակիզմ... Հայութեան երդուեալ թշնամիները չեն կարող հանդուրժել առհասարակ հայկական շարժումը և, ինչպէս որ հայ կապիտալիզմի մէջ նրանք տեսնում են համայնակուլ մի հրէշ, որ մի օր պիտի կուլ տայ բովանդակ Կովկասը, այնպէս էլ հայ շարժման մէջ նրանք կարծես ընդնշմարում են մի չարաղէտ սկզբունք, ուղղված ոչ միայն բիւրօկրատիայի, այլ և իրանց բոլորի դէմ։ Ահա մի ողբալի մտավիճակ, որ պակաս դեր չէ խաղում հայ մարդու դժբախտութիւնների մէջ։ Հայ յեղափոխական տարրի ամենաբնական կռւի ձևերը, բիօլոգիական աշխարհում իսկ ընդունված ու սրբագործված արտայայտութիւնները դառնում են օտար չարակամ քննադատների աչքում մի անախրօնիզմ, դիւային մի խաղ...

Ո՛չ, և դարձեալ ո՛չ։ Մենք «ազգային առանձնացում երբեք չենք քարոզել և չենք դաւանել։ Եւ եթէ վրացի սօց.-դէմօկրատները որոշել են» անդադար կռւել նացիօնալիզմի դէմ, ոչնչացնել նրան իր արմատում» 1), եթէ այդ տեղ ի նկատի ունեն մեր նացիօնալիզմը, ապա նրանք զարնվում են բաց դռների։ Նոյնքան անմտած են վրացի սօցիալ-դէմօկրատների միւս յայտարարութիւնները՝ թէ «վտանգաւոր է պարզել ազգային դրօշակներ»—երբ թէ նրանք են պատճառ դառնում խուլիգանական շահատակութիւնների—թէ ազգայնական ընդհարումները ծնունդ են հէնց նացիօնալիզմի, թէ ուրիշ կուսակցութիւնների շնորհիւ է, որ «հայ գիւղացիները ոչ մի մասնակցութիւն չեն առնում ընդհանուր յեղափոխական շարժման մէջ և այլն և այլն»։

«Ազգային դրօշակներ չը պէտք է հանել» —ահա մի պահանջ, որ միանգամայն ներդաշնակվում է ռուս «պրօլետարի»-ի ծանօթ յիշատակված յայտարարութեան հետ՝

«Այն իրողութիւնը՝ որ այդ օրերում (Բագւի կոտորածի օրերում) իրանց ցոյց տալ կարողացան միմիայն նացիօնալիստ դրօշակեանները, հաստատում է, իմ կարծիքով, միայն այն, որ կառավարութեան տակտիկը—գրգռել մի ազգութիւն միւսի դէմ—աջողութեամբ պիտի առաջ գնայ, քանի դեռ Կովկասում գոյութիւն ունեն ազգայնօրէն առանձնացած քաղաքական կուսակցութիւնները, որոնք իրանք իրանց առաջադրում են ինքնուրոյն նացիօնալիստական

---

1) Այսպէս է ասված վրաց «սօցիալ-դէմօկրատ»-ի մի յօդուածի մէջ, որ թարգմանված է ռուսական «Սօցիալ-Դեմօկրատ»-ի 8-րդ համարում և դրանից անցած «Ռեվօլ. Ռոսսիայի» մէջ։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

—

Ժընեվ, դեկտեմբերի 28-ին

Այսօրվայ պօստով ուղարկեցինք Թիֆլիսի Նպաստամատոյց Յանձնաժողովի գանձապահ պ. Ա. Մելիք-Ազարեանցին 2541 ֆրանկ 85 սանտիմ, Անդրկովկասեան արիւնահեղ դէպքերից վնասված հայերի օգնութեան գործին յատկացնելու համար:

Այդ գումարը կազմված է. 1) Ժընեվի հայկական երեկոյթից, կայացած դեկտեմբերի 6-ին, 1665 ֆր. 15 սանտիմ, 2) Պարիզի հայ ուսանողութիւնից՝ այնտեղ հանգանակած՝ 330 ֆր., 3) Բեռնի հայ ուսանողական երեկոյթից գոյացած՝ 385 ֆր., 4) Լայպցիգից՝ 51 ֆր., 70 ս., հանգանակած Գերմանիայի հայ ուսանողական շրջանում, 5) Ժընեվի հայ ուսանողների շրջանում բացած հանգանակութիւնից՝ 60 ֆրանկ:

Եւրոպայի հայ ուսանողութեան անունից ուղարկելով այդ համեստ գումարը՝ հաւաքված համալսարանական չքաւոր երիտասարդութեան շրջանում և նրա ջանքերով խընդրում ենք հաւատալ, որ դա նիւթական նպաստ չէ մեր երկրի անծայր դժբաղդութեան—վէրքը շատ է մեծ և նպաստը շատ աննշան—այլ սոսկ համակրանքի արտայայտութիւն՝ մեր հալածական և արիւնլուայ ժողովրդին:

«Եւրոպայի հայ Ուսան. Միութ.» կողմից՝
Լիազօր Կոմիտէ

ՊԵՏԱԿԱՆ ԴՈՒՄԱՅԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԱԴՐՈՒԹԻՒՆԸ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿՐՈՒՄ:

—

Կովկասեան նահանգները և շրջանները Պետական Դումայի անդամների ընտրութիւնները կատարում են այն ընդհանուր հիմունքներով, որ մատնացոյց են արված 1905 թւի օգոստոսի 6-ի բարձրագոյն հաստատված Պետական Դումայի ընտրութիւնների կանոնադրութեան մէջ, նոյնպէս և դեկտեմբերի 11-ի Բարձրագոյն տուած ուկազի մէջ, ներկայ կանոնադրութեան փոփոխութեան մասին, հետևեալ փոփոխութիւններով.

1) Ընտրութիւնները կատարելիս Զաքաթալի վիճակը (округъ) միացնվում է Դաղստանի շրջանի հետ, վերջինիս հետ կազմելով մի ընտրողական վիճակ: Մի ընտրողական վիճակ են դառնում նոյնպէս Չերնոմորեան նահանգը, Սուխումի վիճակը և Բաթումի շրջանը:

2) Տերեքի և Կուբանի շրջաններում կազմվում են երկու շրջանային ընտրողական ժողովներ ամեն մէկում: Մէկը—զինուորական կօզակների դասակարգի ընտրութիւններից, իսկ միւսը—շրջանի մնացեալ ազգաբնակութիւնից: Այդ ժողովներից իւրաքանչիւրը իր կողմից ընտրում է Պետական Դումայի համար այնքան թւով անդամներ, որքան որ յիշված է սոյն ցուցակում:

3) Ամեն մի գաւառում, վիճակում կամ բաժանմունքում, ի բաց առեալ ներքևում յիշածները, կազմվում են երեք ընտրողական ժողովներ. ա) հողատէրերի ժողով, բ) քաղաքային ընտրողների ժողով և գ) մասնաւոր գիւղական ժողովների ընտրած լիազօրների ժողով:

Կուբանի շրջանի գաւառներում, նոյնպէս և Տերեքի շրջանի այն գաւառներում, ուր կան կօզակների ստանիցաներ, կազմվում է բացի դրանից և ստանիցաների լիազօրների ընտրողական ժողով:

4) Բանուորական պատգամաւորները,—ընտրվում են ընդհանուր հիմունքներով, Կովկասեան երկրի հետևեալ նահանգներում և քաղաքներում այս քանակութեամբ. Բագու (նահանգում և քաղաքում)—4, Բաթումի շրջանում—1, Թիֆլիսի (Թիֆլիս քաղաքում և նահանգում)—2 և Չերնոմորեան—1:

5) Բագուի և Թիֆլիսի նահանգներում բանուորական ընտրողների ընդհանուր թիւը որոշվում է այդ երկու նահանգների և նախորդ յօդուածում յիշված քաղաքների մէջ, համաձայն գործարանական, հանքային և հանքագործական արդիւնաբերութիւնների ու երկաթուղային արհեստանոցների մէջ եղած բանուորների ընդհանուր թւի, որոնք գտնվում են թէ քաղաքի սահմանների մէջ և թէ դուրսը, նահանգի կամ շրջանի սահմաններում:

6) Բաթումի շրջանի Արդվինի վիճակում և Ղարսի շրջանի բոլոր վիճակներում մասնաւոր հողատէրերի ժողովներ չեն կազմակերպվում, իսկ այն անձինք, որոնք այս կանոնադրութեան 12 յօդ. հիման վրա, ընտրութիւններին մասնակցելու իրաւունք ունեն, մասնակցում են այդ գաւառներում քաղաքային ընտրողների ժողովին:

7) Քաղաքային ընտրողական ժողովներ չեն կազմվում.—Բորչալուի և Թիոնեթինը—Թիֆլիսի նահանգում, Լեչխումի, Ռաչինսկի և Շորապանի—Քութայիսի նահանգի մէջ, Արեշի, Կարեագինի և Ղազախինը—Գանձակի նահանգում, Գեօկչայի—Բագուի նահանգի մէջ, Սուրմալուի, Շարուր-Դարալագեազի և Էջմիածնի—Երևանեան նահանգի մէջ, Քիւրինի—Դաղստանի շրջանում, Բատալպաշինի, Կավկազսկի և Լաբինսկի—Կուբանեան շրջանում, Նալչիկի, Խասավիւրտի և Սունժենեան բաժանմունքում—Տերեքի շրջանի մէջ: Քաղաքային ընտրողական ժողովներին մասնակցելու իրաւունք ունեցող անձինք այդ գաւառներում, բաժանմունքներում և վիճակներում (բացի Քիւրի) մասնակցում են հողատէրերի ժողովներում:

8) Դաղստանի շրջանի Աւարսկի, Անդիյսկի, Գունիբի, Դարգինի, Ղազիգումուխի և Սամուրեան վիճակներում մասնաւոր հողատէրերի և քաղաքային ընտրողների ժողովներ չեն կազմվում, այլ այդ երկու կատեգորիաների եղած ընտրողները մասնակցում են Թէմիրխանշուրայի վիճակի համապատասխան ժողովներում:

9) Դաղստանի շրջանի Քիւրինի մասի քաղաքային ընտրողները մասնակցում են Կայտաղ-Թաբասարանի վիճակի քաղաքային ընտրողների ժողովում (Դերբենդ քաղաքում):

10) Նորին Կայսերական Մեծութեան Կովկասի Փոխարքայից է կախված, երբ նա անհրաժեշտ համարի, ընտրութիւններ կատարելու համար միացնել մի և նոյն նահանգի կամ շրջանի սահմաններում գտնվող զանազան գաւառները (վիճակները) ու կազմել նրանց համար միացեալ ընտրողական ժողովներ:

11) Այն գաւառներում, որոնց վարչութիւնները գտնվում են գաւառական քաղաքում, ընտրողների ժողովներ գումարելու տեղը որոշում է նահանգապետը:

(Կը շարունակվի)

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Երէկ, յունվարի 14-ին, Վեհափառ Կաթողիկոսի անուանակոչութեան օրը Վեհափառին այցելեցին և շնորհաւորեցին Թիֆլիս քաղաքի հայ ազգաբնակութեան զանազան խաւերի ներկայացուցիչները: Վեհափառը իրան համեմատաբար լաւ էր զգում և այցելուների հետ խօսակցում էր օրվայ խնդիրների մասին:

—

Թէ Թիֆլիսի և թէ Կովկասի առևտրական աշխարհը՝ տեղի ունեցող անընդհատ գործադուլներից, արիւնառուշտ անցքերից, պատերազմական դրութիւնից և ընդհանրապէս երկրի ներքին անտանելի խառնակ վիճակից—մեծ հարուածներ կրեց. տագնապի հետևանքները արդէն հետզհետէ սկսում են երևան գալ: Մեր հաւաքած տեղեկութիւններից երևում է, որ ամեն օր մեծ քանակութեամբ մուրհակներ բողոքի են ենթարկվում (պրոտեստում): Առևտրականներից 10% անկարող են իրանց զգում ապրանքների վճարները հատուցանելու գործարանատէրերին, 90%-ը դիմումներ են արել գործարանատէրերին՝ նոր ժամանակ նշանակելու վճարների համար և մուրհակները փոխելու, իսկ մի քանիսը փակել են իրանց առևտրական ձեռնարկութիւնները՝ մատնվելով ձախորդ դէպքերի պատճառով սնանկութեան (մէկի պասսիվը հասնում է գրեթէ 190,000 րուբլու): Առևտրական տագնապը մանաւանդ զգալի է գալանտերէյնի և մանուֆակտուրային ապրանքների վաճառողներին, որոնք գործ ունեն գլխաւորապէս Լօձու, Վարշավայի և Մոսկվայի գործարանների հետ: Առևտրական այս տագնապալի վիճակը որոշ չափով զգալի պէտք է լինի, բացի գործարանատէրերից և վաճառականներից—և պետական գանձարանին, որը առևտուրի ծաղկումից մեծամեծ շահեր ունի. գալիք ապագան ևս մռայլ պատկեր է ներկայացնում:

—

Ինչպէս հաղորդում են «Молва» լրագրին այն լուրը, թէ գեն.-ադյուտ. Դուբասով նշանակվում է Կովկասի Փոխարքայ, չէ հաստատվում: Ասում են, որ Կովկասի համար կը նշանակվի մի անձն, որ ծանօթ լինի երկրի և տեղական պայմանների հետ: Իբրև այդպիսի անձն առնւանում են գեներալ Բօտիօնովին և գեներալ բարօն Զալցը: Յամառ լուր է պտտում, որ փոխարքայութիւնը Կովկասում վերացնվելու է:

—

Վրաստանի էկզարխը մտցրել ս. Սինոդի քննութեան վրայ եկեղեցու աւտոնոմիայի հարցը: Այդ հարցի քննութեան համար ս. Սինոդին կից կը կազմվեն խորհրդակցութիւններ, որոնց պէտք է մասնակցեն Օրլովի եպիսկոպոս Կիրիօնը և Իմերետիայի Լէօնիդը:

—

Ասում են, որ Թիֆլիսի մահմեդական երիտասարդ ինտելիգենցիայի մէջ միտք է յղացել հրատարակելու ռուսերէն մի լրագիր, որի խմբագիրը պէտք է լինի Մահմեդ-Աղա—Շահթախտինսկին:

—

Թիֆլիսի առևտրական-արդիւնաբերական Կոմիտէտը խնդիր էր ներկայացրել ներքին գործերի մինիստրութեան, որ պահելու յատուկ վճար չառնվի այն բոլոր բեռների համար, որոնք մնացել են վագօններում կամ պահեստներում վերջին գործադուլի պատճառով: Ներքին գործերի մինիստրութիւնը, այդ առիթով բանակցութեան մտնելով հաղորդակցութեան ուղիների մինիստրութեան հետ, որոշել են թոյլատրել այդ ժամանակամիջոցի համար ապրանքները պահելու փոխարէն քրէն չը վերցնել ոչ պահեստների և ոչ էլ վագօնները կանգնած մնալու առիթով: Իսկ այն վաճառականները, որոնք արդէն վճարել են պահեստավճարը և ապրանքները դուրս առել, կարող են խնդիր ներկայացնել և յետ պահանջել իրանց վճարները: Այդ խնդիրները հրամայված է քննել արագացրած կարգով:

—

Վերջերս մայրաքաղաքի զանազան թերթերում լուրեր հրատարակվեցին, թէ իբր Կովկասի փոխարքայութիւնը վերացվում է: Այդ լուրերը ապա հերքվեցին, սակայն ռուսաց հեռագրական գործակալութիւնը յունվարի 12-ին նորից հաղորդում է Պետերբուրգից հետևեալը. «Լուրերին նայելով, փոխարքայութիւնը Կովկասում շուտով պէտք է վերացվի: Կովկասում կը կազմվեն երեք ընդհանուր-նահանգապետութիւններ—մէկը՝ Անդրկովկասում և երրորդը՝ Քութայիսում»:

—

Պետերբուրգի դատաստանական պալատի կարգադրութեամբ դադարեցրված է, մինչև դատաստանական քննութիւն կատարելը, «Обновленная Россія» թերթը, որ հրատարակվում է այնտեղ: («Нар. Хоз.»)

—

Ինչպէս «Մշակում» յայտնել էինք, ֆինանսների նախկին մինիստր Կոկօվցեվ գնացել էր Պարիզ, մի նոր փոխառութեան միսսիայով: «Temps» լրագրի մէջ տպված է նրա մի տեսակցութիւնը թերթի աշխատակիցներից մէկի հետ, համառուսական յեղափոխութեան դէպքերի մասին: Կոկօվցեվ ներկայ շարժումը բացատրելու համար նախ գցում է մի մի յետադարձ ակնարկ. ասում է, որ Պլեվէի սպանութիւնից յետոյ Սվեատապոլկ-Միրսկու շրջանը թուլութեան մի շրջան եղաւ: Միրսկին «բարեմիտ, բայց թոյլ ու վատառողջ մարդ էր և բաց թողեց ժողովրդական առիթ սանձը»: Նորածին բազմաթիւ թերթերը հեղեղվեցին «վըստանդարու» թէօրիաներով: Դա այսպէս ասած՝ մասսաների ինքնագիտակցութեան զարթումն էր, նախկին մինիստրի խօսքով «բարոյական անիշխանութեան» շրջանը, քանի որ ընթերցողները «ընդդատարար» չէին վերաբերվում դէպի այդ թէօրիաները: Միրսկուն յաջորդեց Բուլիգինը, որ «ռէակցիօներ» չէր, ինչպէս պնդեցին: Բայց Կոկօվցեվ ընդունում է, որ կարելի էր նրա մշակած ընտրողական սիստեմը պակասաւոր գտնել, շարունակվող պատերազմը սակայն բանը փչացրեց: Մամուլը այնպիսի յարձակողական դիրք բռնեց, որը ոչ մի օրէնք չէր թոյլատրում: Բայց իշխանութիւնները իրանց գլուխը կորցրել էին, Կոկօվցեվի խօսքերով «վախենում էին վերադառնալ հին կարգերին»: Եւ վերջապէս հոկտ. 17-ի հռչակաւոր մանիֆեստը որը շնորհում էր չորս ազատութիւնները: Դրութիւնը աւելի ծանրացաւ: Եւ «ինչպէս Ռուսաստանում, նոյնպէս արտասահմանում սկսեցին սխալ մեկնել ռուս կառավարութեան դիտաւորութիւնները»: Վիտտէին մեղադրեցին իբրև «թոյլ» մարդու, մինչդեռ «ռօպէն խիստ միջոցների դիմելու» րոպէ չէր: Այժմ բերենք Կոկօվցեվի խօսքերը. «Բայց յեղափոխականները ոչինչ չէին ուզում հասկանալ. այն միջոցում, երբ մենք չէինք ցանկանում նրանց ջարդել, նրանք այնպէս կարծեցին, թէ չէինք կարող ջարդել: Նրանք հաւատացնում էին—և արտասահմանում էլ հաւատացին—որ եթէ, նրանց չեն զսպում, այդ ոչ թէ ազնւութիւնից է, այլ թուլութիւնից: Նրանք ասում էին, որ զօրքը նրանց հետ է և մենք վըստահ չենք զօրքի վրա... մի բան, որին դարձեալ հաւատք ընծայեցին... Այդ ժամանակամիջոցից սկսեցին ապստամբութեան ցոյցերը: Հարկադրվեցին ձեռք առնել պէտք եղած միջոցները: Ադմիրալ Դուբասովը անիշխանականներին դաս տուեց Մոսկվայում: Զօրքերը կատարեցին իրանց պարտքը կատարեալ հնազանդութեամբ: Կարգն էլ առանց խանգարվելու վերականգնվեց»: Այնուհետև Կոկօվցեվ յայտարարում է, որ ապստամբութիւն որ և է փոքր խառնութեամբ կը զսպվի: Բայց յանկարծ յիշելով, որ նա եկել է փոխառութեան համար, և ոչ սպառազ սարսափների հեռապատկերը կոչելու Եւրոպայի ընթերցողների մտքի առաջ, աւելացնում է. «Բայց ոստիկանական միջոցները չեն կարող արգելք լինել նախագծված րէֆօրմների իրագործման: Դա վճռված է անպայման... Ռուս ժողովուրդը՝ որին լաւ չեն ճանաչում, կը կարողանայ օգտվել ընտրողական իրաւունքից: Գիւղացիութիւնը խորապէս անձնուէր է կայսրին: Եթէ երբէք յեղափոխականները ժամանակաւոր կառավարութեան հաստատէին նոյն իսկ Պետերբուրգում, երկու շաբաթից յետոյ նրա անդամներին կը կախեր ժողովուրդը իր թոկով»: Եւ Կոկօվցեվ խորհուրդ է տալիս հաւատ ընծայել Պետական Դումային: Կոկօվցեվ խօսում է մի կատարեալ օպպօրտիւնիստի լեզուով: Երբեմն հակվում է դէպի աջ, երբեմն դէպի ձախ: Բանն, ինչպէս այն է, որ կառավարութիւնը սխալվեց և սխալվում է հէնց այս րոպէիս, ձգձգելով րէֆօրմների իրագործումը: Անհրաժեշտ է վերջ տալ այս անել կացութեան, վերացնելով զինուորական դրութիւնը երկրից և մի րոպէ առաջ ձեռնարկելով ստեղծագործական աշխատանքի:

—

Դեկտեմբերի 11-ի ընտրողական օրէնքի հիման վրա, ամբողջ Ռուսաստանի ընտրողների թիւը հաւասար է 7,789: Այդ թւից—գիւղացիներից 2,532—32,5%, հողատէրերից—1,945—25%, քաղաքացիներից—2 մայրաքաղաքների և 18 քաղաքների 1760—22,6%: Այդ ընդհանուր թւից երկու մայրաքաղաքներին 320 ընտրողներ, ամեն մէկում 160, և 18 քաղաքներին 1,440 հոգի ամեն մի քաղաքին 80 ընտրողներ: Նահանգական քաղաքներից—1,354—17,4%: Քաղաքային ազգաբնակութեան ընտրողների ընդհանուր թիւը, այդպիսով, հաւասարվում է 3,114—40%: («Нар. Хоз.»)

—

Օդեսսայի «Од. Нов.» լրագրում կարդում ենք. «Սիմֆէրօպօլի գաւառի Ջանա գիւղում այս օրերս մի շատ հետաքրքրական միտինգ տեղի ունեցաւ: Հաւաքվել էին Ղրիմի 4 գաւառների թուրքերը, 2,000-ից աւելի մարդ: Միտինգը տևեց մի ամբողջ օր, խօսեցին շատ հռետորներ, թէ քաղաքացիներ և թէ գիւղացիներ—խելացի և գեղեցիկ ճառեր: Միտինգն ընդունեց սովորական րէզօլիւցիան, իսկ յետոյ վճռեց պահանջել բոլոր վակուֆի և նախկին թաթարական պետական հողերը տալ հողազուրկ թուրքերին, պահանջել, որ նորակոչ թուրք զինուորները միայն ծառայութեան բացառապէս Ղրիմի դիվիզիայի մէջ, ուր նրանք կարող լինեն կատարել նրանց օրէնքի (շարիաթի) բոլոր պահանջները: Որոշվել է հետևեալ համագումարը հրաւիրել Սիմֆէրօպօլում և հրաւիրել մասնակցելու Ղրիմի բոլոր թուրքերին:—Ընդհանրապէս ազատաբար շարժումը Ղրիմի թուրքերի մէջ սաստիկ զօրանում է»:—Վատ չէր լինի, եթէ Կովկասի շիա թուրքերի ինտելիգենցիան մի քիչ աւելի մօտեցէր Ղրիմի թուրքերի տուած օրինակի վրա:

—

Հրաւիրում ենք բարերարների ուշադրութիւնը բոլոր ինչից զրկված, այժմս էլ հիւանդ պառկած Մարտիրոս Տէր-Մարտիրոսեանցի ցաւալի դրութեան վրա: Այդ խեղճը իր ընտանիքով զրկվել են ամեն ունեցածից Բագուի հայ-թուրքական կոտորածների ժամանակ և այժմ մինչև անգամ հացի էլ կարօտ են, չը նայած, որ հիւանդ սենեակում սաստիկ ցուրտ է փայտ չունենալու պատճառով. հետևապէս սպառնում է նրանց սովը մի կողմից ցուրտը միւս կողմից: Նուիրատուութիւնը կարելի է ուղարկել հիւանդի տունը, որի հասցէն հետևեալն է՝ Некрасовская. д. № 26.

—

«Молва» լրագրի մէջ կարդում ենք. «Արդէն մի քանի ժամանակ է Թիֆլիսում, ինչպէս հաղորդում է Ռուսաց հեռագրակ. գործակալութիւնը, ոչ մի տեղեկութիւն չէ ստացվում Երևանից և Կարսից: Մուսուլմանական շարժումը գրաւել է Կարսի շրջանի և Գանձակի նահանգի բոլոր գաւառները: Սպասվում է զօրքերի գալը: Անլուր չարագործութիւններ է կատարվում գաւառներում: Փոխարքան հրամայել է կազմել զօրքերի նոր խմբեր այդ տեղերը ուղարկելու համար»:

—

Մոսկվայի անցքերի մասին: Դեկտեմբերի անցքերից ստեղծված բոլոր գործերի քննութիւնը շատ դանդաղ է ընթանում այն պատճառով, որ կալանաւորված և պատասխանատուութեան են ենթարկված ահագին թւով մարդիկ, և թէև կալանաւորների յանցանքները տարբեր են, բայց նրանց մէջ շաղկապող մի ընդհանուր թել կայ. ուստի շատ հաւանական է, որ դեկտեմբերի օրերի համար բոլոր կալանաւորվածները, բացի այնպիսիներից, որոնք պէտք պատժվեն ադմինիստրատիվ կարգով, պատասխանատուութեան կը ենթարկվեն մի ընդհանուր խոշոր գործի մէջ, ըստ որում մէկին կը վերագրվի ակտիվ մասնակցութիւն, միւսին—ագիտացիա, երրորդին պրօպագանդա և այլն: Ըստ որում կալանաւորներից մի քանիսը բռնված են միայն այն պատճառով, որ նրանք տարածում էին գիւղացիների մէջ ամեն տեսակի հրատարակութիւններ և սօցիալիստական թերթեր: Ասում են, որ շատ լուրջ մեղադրանքներ է յարուցվելու Պրօխօրովի գործարանի նախկին ինժեների դէմ, որովհետև նա ակտիվ կերպով մասնակցել է նոյն գործարանում ցոյց տուած զինված դիմադրութեանը, իսկ մօտ ժամանակներս նրա կառուցած կօրպուսում գտնված են պատերի մէջ յատուկ շինված տեղեր պայթուցիկ իրեր թագցնելու համար, որը գործարանատէրերը, ի հարկէ, չէին իմանում: («Н. В.»)

—

Մօտ ժամանակներս ռուսաց թերթերում լոյս տեսան Մոսկվայի յեղափոխութեան մեծ օրերին բաւականաչափ հետաքրքիր մի մէջնադէպ: Ցեխ ընկած փողոցներից մէկում դարպասներից ու լապտերների սիւներից շինել էին մի ահագին բարրիկադա: Մէջ տեղում մի երկար ձողի վրա էր կարմիր դրօշակը վրան գրված. «Հող և Ազատութիւն»: Այստեղ շատ կօզակներ ու դրագուններ էին սպանվել: Բարրիկադան դարձել էր սարսափելի տեղ, կամաւոր խմբերի պարծանքը, իսկ կամաւորների ղեկավարը—առասպելական անձնաւորութիւն: Եւ տարօրինակ, զարմանալի մի բան: Այդ առասպելական անձնաւորութիւնը, կամաւորների այդ քաջ ղեկավարը—մի բոլորովին մատաղահաս աղջիկ էր 17—18 տարեկան: Նորա առնական գեղեցիկ դէմքը վառվում էր աւիւնով ու կորճութեամբ: Նորա տրամադրութեան տակ էր գտնվում մի ամբողջ կամաւորների հարիւրեակ, որոնց նա ղեկավարում էր իր անօրինակ հերոսութեամբ և որոնք աներկիւղ նետվում էին նորա յետևից կրակի ու ջրի մէջ: Մատաղահաս հերոսուհին միշտ էլ ամենից առաջ էր լինում կանգնած և երբեք չէր թագցնում իր ատրճանակը: Պատահում էին վայրկեաններ նոյնպէս, երբ նա զէնքը ձեռքին բռնած կամաւորներին նա առաջնորդում էր յարձակման և առաջինը ինքն էր լինում թագստից յարձակվողը անցնող դրագունների էսկադրօնի վրա: Հակառակորդի թիւը նորան չէ հետաքրքրում. միևնոյն ոգևորութեամբ գրոհ է տալիս թէ տասը գօրօդօվոյների վրա և թէ կօզակների վրա: Անձամբ քաջ լինելով, նա իր քաջութեամբ վարակում էր և կամաւորներին: Նորա իշխանութիւնը կայանում էր հետևեալ երեք պահանջների մէջ, վախկոտներին արհամարհել, փախուստ տուողներին—ճակատից գնդակահարել, քաջերին—յարգանք և զոհաբերութիւն: Պատահաբար կամաւորների ձեռքն էին ընկնում երբեմն ոստիկաններ: Աղջիկ խմբապետը առանց տատանվելու մահվան դատավճիռ էր տալիս և ինքն էլ իրագործում: Նորա կանացի քնքոյշ սիրտը անկեղծ յեղափոխականի խիստ զրահաւորութեան տակ բոլորովին ցամաքել էր նորա մէջ: Ամբողջապէս անձնատուր լինելով ազատութեան և յեղափոխութեան իդէալին, նա չը գիտէր ոչ ներել, ոչ էլ խնայել:

—

Անցեալ անգամ մենք հաղորդել էինք, որ Բաթումում մահմեդականների և վրացիների մէջև յարաբերութիւնները լարվել են և որ մահմեդականներն սպանել են 9 վրացի: Այժմ «Нов. Об.» լրագիրը հաղորդում է, որ Թիֆլիսում ստացված տեղեկութիւնների համաձայն, մահմեդականների և վրացիների մէջև յարաբերութիւնները սրված չեն:

—

Նպատակներ»:

Կովկասեան ինքնատիպ մարքսիզմը դեռ շատ անակնկալներ պիտի պատճառէ մեզ, պրօֆաններիս, իր ինքնատիպ սօցիօլօգիական գիւտերով:

Ազգային դրօշակներ չը պէտք է պարզել, ազգի անունով առհասարակ չը պէտք է խօսել ու գործել—դա նացիօնալիզմ է և գուցէ... սօցիալիզմի պրօֆանացիա... Օրինակը վարակիչ է, մանաւանդ հայերի մէջ, ուր ծանծաղամիտ կօսմօպօլիտիզմը «առաջադիմութիւններ» է անում—և մենք չենք զարմանում, տեսնելով անհատներ, որոնցից իւրաքանչիւրը իր նորընծայական յափշտակութեան մէջ, «ուղղադաւան» թէօրիաներով տարված՝ կասէ ձեզ, օրինակ, թէ ինքը «մարդ է» կամ սօցեալ-դէմօկրատ» է, կամ ռուսաստանցի սօցիալ-դէմօկրատ է, և դժկամակութեամբ ու ամաչելով միայն կը յիշատակէ իր ազգային ծագումը,—ճիշտ այնպէս, ինչպէս հին փիլիսոփայութեան նէօ-քրիստոնէական յայտնի շկօլայի ներկայացուցիչ Պլօտինը ամաչում, կարմրում էր, որ մարմին ունէր, այնքան սպիրիտուալիզմը, հոգեպաշտական զգացմունքը գերել էին նրան...

Ազգային դրօշակներ չը պէտք էր պարզել... 1903-ի աշնան չը պէտք էր հրապարակ գալ ազգային պարօլով, թէպէտև խլում էին ազգի գոյութեան վերջին մնացորդները. յեղափոխական տարրը չը պէտք է կոչէր՝ «կեցցէ՜ ազգութեան բռնաբարված իրաւունքը». «Դաշնակցութիւնը» չը պէտք է կազմակերպէր իր խմբերը բիւրօկրատիայի ու թուրք խուժանի դէմ նոյն ազգային նշանաբանի տակ, նա չը պէտք է առաջ մղէր քաղաքների և գիւղերի հայ ժողովուրդը՝ նոյն վտանգված հաւաքական գոյութիւնը զէնքը ձեռին պաշտպանելու համար... Այդ բոլորը «նացիօնալիզմ» է և «Դաշնակցութեան» այդպիսի միջամտութիւնը, վրաց ս.-դ. օրգանի ասելով, տրամադրում էր «հայ գիւղացիներին՝ ոչ մի մասնակցութիւն չունենալ ընդհանուր յեղափոխական շարժման մէջ» (կարծես դա ընդհանուր, հակապետական շարժման մի կողմի արտայայտութիւնը չը լինէր), այդ բոլորը նացիօնալիզմ է, դրա փոխարէն պէտք էր միայն կանգնել հրապարակի վրա և զիլ ձայնով գոչել՝—«պրօլետարներ բոլոր երկրների, միացէք»,—և խեղճ հայութիւնը դարման կը ստանար իր ծով ցաւերին... Մենք տեսանք, սակայն, թէ արհեստական պրօլետարիատի անունով խօսող ինտերնացիօնալիստները, Դաշնակցութեան շօվինիզմի առթիւ գլուխ ծեծողները ինչ օգնութիւն արին մորթվող հայութեան, «պօգրօմների» օրերին, և ինչպէս արդարացրին իրանց սրտաշարժ անտարբերութիւնը...

Հերիք է. ժամանակ է, որ թողնենք սխօլաստիկական մտածողութեան այդ տարամերժ ու վայրենի ձևերը, չը կաշկանդենք, չը խեղաթիւրենք նրանցով նոր կեանքի կոչվող երիտասարդութեան հարցասէր մտքերը: Առողջ տրամաբանութիւնը ըմբոստանում է այդ կամայական ու բռնազբօսիկ ֆօրմուլների դէմ. նա ասում է, որ կարելի է սօցիալիստ լինել և ամենաջերմ պաշտպան կանգնել իր ազգայնական իրաւունքների ու անկախութեան. նա հաստատում է, որ կարելի՛ է ամենաուղղափառ մարքսիզմ դաւանել և հրապարակ գալ ազգային դրօշակի ու նշանաբանի տակ, որոշ մօմէնտներում, երբ վտանգ է սպառնում ազգայնութեան ինքնուրոյնութեան, նրա ազատ և նորմալ զարգացման:

Ճշմարիտ, ոչ խեղաթիւրված սօցիալիզմը զանազանում է այն ռազմատենչ, աշխարհակալող ու փառակար նացիօնալիզմը, որ վերջին տարիներում գլուխ է բարձրացրել ու այնքան տխուր հռչակ է ստացել Ֆրանսիայում ու Անգլիայում, և այն միւս «նացիօնալիզմը», որ ոչ այլ ինչ է, բայց եթէ ձգտում ազգային վերածնութեան ու առաջադիմութեան, ձգտում՝ կրթելու և բարձրացնելու հարազատ ժողովուրդը համամարդկային իդէալների ոգով: Ճշմարիտ սօցիալիզմը նշաւակում է, անարգ սիւնին մեխում ոչ այն ազգայնութիւնը, որ սեփական արիւնն է թափում, ազատ, ինքնագլուխ ապրելու համար, այլ այն միւսը, որը արեան հեղեղների մէջ խեղդել է ուզում ուրիշ ազգերի ազատութեան թռիչքները: Չափազանց տարրական բաներ են սրանք և վաղուց ժամանակ է հասկանալ:

Հայ դաշնակցականը նոյնպիսի իրաւունքով կարող է փառաբանել իր ազգայնութեան դատը, որպիսի իրաւունքով մի Բեբէլ կամ մի Պրեսանսէ պատրաստականութիւն կը յայտնեն զէնքը ձեռին ասպարէզ նետվելու՝ իւրաքանչիւրը իր հայրենիքը պաշտպանելու համար:

Հայ դաշնակցականը նոյնքան իրաւունքով կարող է սիրել իր լեզուն, երկիրը, պատմութիւնը, որքան իրաւունքով մի էնտրանզիժան սօցիալիստ Ֆերրի կարող է բացականչել. «Ես շատ սիրում եմ իմ մեծ հայրենիքը՝ Իտալիան և ես կրում եմ զուարթ սրտով բոլոր դրկանքներն ու փոթորիկները՝ յանուն հայրենիքի այդ սիրուն...»

Այդպէս է հրահանգում իսկական, չը խեղաթիւրված սօցիալիզմը: Այդ է բուն իմաստը և այն ծանօթ, տարածված բանաձևի, որի անունն է «ազգայնական ինքնորոշում» և որը Ռուսաստանի ու Կովկասի սօցիալ-դէմօկրատների աչքում կարծեք մի դատարկ, աւելորդ ֆօրմուլ է, որ ծառայում է միայն ագիտացիական նպատակների և որի մէջ երբեք չը պէտք է դնել որ և է կօնկրետ բովանդակութիւն, այլապէս կընկնեք նացիօնալիզմի գիրկը և կարժանանաք կովկասեան պապերի ահեղ բանադրանքին... Դա անհաւատալի է, ընթերցող, բայց իրողութիւն է. փաստերի շարքը կարելի է երկարել. սակայն չը հեռանանք մեր հիմնական խնդրից:

Առաջ գնանք չարատանջ «պատճառների» քննութեան մէջ: Հայ նացիօնալիզմը, մանաւանդ դաշնակցական նացիօնալիզմը, այդպիսով, գործ չունի հայ-թուրքական ընդհարումների հետ և մենք սրտանց կը փափագէինք, որ մեր բոլոր դրացիները վարակված լինէին նոյն տեսակի նացիօնալիզմով, ինչպէս մենք:

Գուցէ մեղաւոր է հայ կապիտալիզմը..

Այդ հարցումը տալով, մենք յայտնվում ենք տնտեսական ֆակտորի հանդէպ, որը հանդիսանում է շատերի աչքում, իբրև գլխաւոր դըրդապատճառ կովկասեան մռայլ ողբերգութեան: Ոմանք նոյն իսկ գրեթէ բացառապէս ծանրանում են այդ ֆակտորի վրա, չը շեշտելով միւս՝ քաղաքական, ցեղական-կրօնական և այլն մօմէնտները, կամ երկրորդական ու երրորդական տեղ տալով նրանց: Այդ էլ, ինչպէս տեսանք, էապէս սօցիալ-դէմօկրատական տեսակէտ է, որ այժմ կը փորձենք քննել աւելի հանգամանօրէն:

Նախ ընդունենք, որ ամբողջ թուրք ժողովուրդն է հայութեան դէմ կռիւ հրատարակողը և ոչ նրա մի առանձին հատվածը կամ, ինչպէս սովորաբար ասում են, թուրք խուժանը, «հասարակութեան թափթփուկը»: Այդ վերջին պատրանքը դեռ կարող էր տիրել կողմնակի դիտողին արիւնոտ դրամայի սկզբներում, երբ յիրաւի թուրք ազգաբնակութեան մի ստուար մասը ոչ միայն չէր մասնակցում թալանին ու սպանութիւններին, այլ և եռանդով դիմադրում էր նրան: Սակայն օր աւուր, արեան ալիքի ծաւալվելուն հետ, գաւառներում ու քաղաքներում, թուրք ժողովրդի այն զանգվածները բնազդմամբ մղվեցին ոճրի գիրկը և այն՝ իբրև յարձակողական ուժ: Բացառութիւններ դարձեալ մնացին, անշուշտ, թուրք տարրի մէջ և նրանք այնքան աւելի յարգելի են մեզ, որքան մռայլ ու յուսահատական է թուրք ընդհանրութեան մտավիճակը (mentalité)—սակայն, այդ բացառութիւններն էլ միայն հաստատում են ընդհանուր կանոնը: Մենք ողբում ենք այդ իրողութիւնը, բայց ստիպված ենք արձանագրել.—այնքան ծանր աղէտների դիմաց էօֆէմիզմներն ու փափկանկատութիւնները տեղ չեն գալիս և մենք պարտաւոր ենք լիակատար հարկը տալ ճշմարտութեան թէկուզ, և դաժան անողորմ ճշմարտութեան:

Թուրք ժողովուրդն է իր բէկերով ու մոլլաներով, իր կրթված ու անկիրթ ներկայացուցիչներով, թուրք մասսան է, որ հրաժեշտ է տալիս երէկվայ խաղաղ, հաշտ դրացիութեան և գահավիժվում է հայ ժողովրդի վրա, կեանքի ու մահվան խնդիր դնելով հայութեան առջև...

Այդքան անօրինակ, եզակի, խոշոր հասարակագիտական մի երևոյթ ճիշտ է որ չէր կարելի մեկնաբանել սոսկ քաղաքական, պետական գործօնով, սոսկ իշխանութիւնների հայատեաց դրդումներով, պէտք էր փնտրել այլ շարժառիթներ: Եւ երբ ուշադիր ու իրազեկ միտքը ուզում է փնտրել այլ կարգի պատճառներ ժողովրդական այդպիսի մի շարժման, նա բնականաբար կանգ է առնում մարդկային ամենապարզ, ամենաընդհանուր ախորժակների վրա, ստամոքսի թելադրութիւնների վրա, նիւթական կամ տնտեսական պահանջների վրա: Այդպէս է վարվում և իրաւամբ-սօցիօլօգիայի նորագոյն դպրոց, մարքսիստական կամ տնտեսական մատերիալիզմի շկօլան, երբ նրա առջև պարզվում են մարդկային պատմութիւնն ալեկոծող ժողովրդական այլազան շարժումները և տիրաբար լուծում են պահանջում:

Այդպէս կամեցան վարվել և մեր կովկասեան մարքսիստները, որոնք թափով հրապարակ եկան և թուրք-հայկական պրօբլէմի քննութիւնը ձեռք առնելով, տնտեսական մեթոդը վայր ու վերոյ կիրառելով, սկսեցին աջ ու ձախ հոլովել ծանօթ տերմինները՝ «տնտեսական կռիւ», «դասակարգային կռիւ», «կապիտալիզացիա», «պրօլետարիզացիա»... Սակայն, ինչպէս յաճախ պատահում է Մարքսի էպիգոնների և նորընծայ-աշակերտների հետ, կովկասեան մարքսիստները հասան անհեթեթ ծայրայեղութիւնների՝ թէ թէօրիական բացատրութեան և թէ գործնական եզրակացութիւնների մէջ, որոնց շարքում մի դառն, ցաւագին զաւեշտականութեամբ փայլում է Թիֆլիսեան օրգանի թղթակցի այն կլասսիկ յայտարարութիւնը, որ կովկասահայ մամուլը նշաւակեց միանգամայն արդար ցասումով, իբրև տմարդի, անպատիւ, անառակ մի երևոյթ... Յիշեցէք, ընթերցող, «Վօզրօժդէնիէ»-ի Մոսկվայի թղթակցին, որը կովկասեան փոխարքային ուղղած մի զեկուցման մէջ խորհուրդ էր տալիս չը դիմել խիստ, ճնշող միջոցների թուրք ազգաբնակութեան դէմ, պատճառաբանելով, որ այդ վերջինը գտնվում է ամենադժբախտ պայմանների մէջ և չէ կարող դիմանալ տնտեսական մրցակցութեան: «Միլիօնաւոր ժողովուրդը, ասում էր դա, խրված կատարեալ տգիտութեան մէջ, չունենալով մի տոոր անշարժ սեփականութիւն, բոլորովին անկարող է տնտեսական կռիւ մղել անչափ աւելի կուլտուրական և տնտեսապէս աւելի ուժեղ ժողովրդի (հասկացէք՝ հայերի) հետ:

Այդպէս ահա հանճարեղ ուսուցչի անշնորհք, անարժան աշակերտները թեթևամտութեամբ խրախուսում են անպատժութիւնը թուրք հրոսակների մէջ և գիտական դաւանանքի անունով նուիրագործում հայի աղեխարշ նահատակութիւնը... Բայց կարճ կապենք. մտաւոր բարոյական այլանդակութիւնը այնքան կատարեալ է այդ եղկելի յայտարարութեան մէջ, որ ամեն մեկնութիւն թւում է աւելորդ:

«Տնտեսական» բառի իմաստը ճկուն է, առաձգական: Նա ունի ընդհանուր և մասնաւոր նշանակութիւն: Ընդհանուր մտքով, եթէ կուզէք, տնտեսական ֆօրմուլը կիրառելի է մեր քննելի խնդրում: Մենք կարող ենք ասել, օրինակ, որ թուրք ժողովրդի լայն զանգւածները իրենց ընդհանուր մօբիլիզացիայի մէջ հայերի վրա՝ հնազանդվել են այն շատ տարրական ախորժակներին, որ մենք քիչ առաջ յիշատակեցինք: Լինելով մեծ մասամբ խեղճ ու չքաւոր, նրանք կամեցել են պատեհ առիթով փոքր ինչ հարստանալ, թէկուզ և ի հաշիւ իրենց պէս թշւառ ազգաբնակութեան: Եւ առաջացել են ջարդեր, արիւնհեղութիւններ, որոնք, դէհ, անխուսափելի են թալանի միջոցին...

Տնտեսական բացատրութեան այդ ձևը, ինչպէս տեսնում էք, árilagueur ընդունելի է, թէև դա շաբլօնական, աղօտ, տարտամ մի բացատրութիւն է, որ ոչինչ չէ բացատրում, որ չէ թափանցում արիւնոտ հարցի խորքերը, չէ պարզաբանում կատաստրօֆի հրէշաւոր ծաւալը, այն սպեցիֆիկ, դժոխային արտայայտութիւնները, որ ունեցաւ թուրք ժողովրդի մօբիլիզացիան:

Կովկասեան սօցիալ-դէմօկրատները մասնաւորեցին, կամ աւելի ճիշտ՝ որոշադրեցին «տնտեսական» ատրիբուտը և մի կողմից հրահանգված մարքսիզմի ֆօրմուլներից, միւս կողմից ակամայ ներշնչված հրապարակի վրա շրջող նախապաշարումներից, թուրք իդէօլօգների տնտեսական ճնշման ու ստրկացման մասին՝ միւսի միջոցով, մէկ դասակարգի (հայ բուրժուազիայի) տնտեսական գերիշխանութեան ու ոտնձգութիւնների մասին:

Թուրք ժողովրդի quasi—ստրկացումը հայ ազգութեան կամ նրա մէկ հատուածի ձեռքով՝ պէտք է դիտել իբրև մի անկայուն պարադօքս և յետ մղել, առանց երկար ու բարակ բացատրութիւնների: Թուրք մասսայի հակահայկական զգացումներն ու գործողութիւնները չեն կարող բղխել հայի տնտեսական ճնշումներից, այն պարզ պատճառով՝ որ նա, թուրք մասսան, չէ կարող տեսնել իրականութեան մէջ այդ ճնշումները: Իր ծայրայեղ տգիտութեան ու կուրութեան մէջ անգամ նա տեսնում է, որ գաւառներում լայնատարած և լաւագոյն հողերը պատկանում են իր կրօնակից աղաներին, որոնք իշխում են ֆէօդալական իշխանութեամբ, ճնշելով և հայ և թուրք հողագործին. այո, անտարակոյս, թուրք ամենայետին գեղջուկն անգամ պարզ տեսնում է, որ հայ աշխատաւորը նոյնքան «սեփականատէր» է, նոյնքան «հողատէր», որքան և ինքը: Իրողութիւնը հանրածանօթ է և թերևս կարիք իսկ չը կայ դիմել ձեռնհաս հեղինակութիւնների: «Իսկական հայ ժողովուրդը, ասում է կովկասագէտ պրօֆէսսօր Մարր, աւելի մեծ չափով պրօլետարիատի (գիւղական պրօլետարիատի) յատկութիւններ ունի, քան թէ Գուրիայի ժողովուրդը»: Նոյն գիտնականը հետևեալն է ասում թուրքերի մասին. «մուսուլման աշխատաւոր ժողովուրդը մինչև օրս էլ հեծելով հեծում է համակրօն ֆէօդալների ծայրահեղ ճնշման տակ». («Պետերբուրգսկի Վեդոմոստի» № 272): Կարելի՞ է լինել աւելի անաչառ կարծիք:

Խոշոր կալուածատիրութիւնը իբրև դասակարգ (Crossgrundbesitztum), գոյութիւն ունի ոչ թէ հայերի, այլ թուրքերի մէջ, և հետևապէս, ագրարային աշխարհում ժողովրդային մասսաների վրա ճնշում կարող է լինել ոչ թէ հայ, այլ թուրք տարրի կողմից: Լրջութիւն չի լինի մեր դատողութեան մէջ, եթէ ծանրանանք հայ մանր բուրժուազիայի՝ մանր առևտրականների ու վաշխառուների՝ կեղեքումների վրա:

Բայց գուցէ՞ ճնշում կայ հայերի կողմից՝ խոշոր կապիտալի, կամ ինդուստրիայի աշխարհում:

Թւում է թէ այդտեղ է բանավէճի կենտրոնը, ամենափափուկ ու շահագրգռող կէտը: Այնտեղ, կովկասեան ինդուստրիայի և մահմեդական աշխարհի սրտումն է, որ նիւթվել է հրէշային դաւադրութիւնը, այնտեղ է, որ նա առաջին անգամ իրագործվեց ողբերգական, համաշխարհային շառաչումով. այնտեղից է, հաւանականօրէն, որ դաւադրութիւնը ճիւղաւորվել է ամբողջ Անդրկովկասում, տարածելով իր հետ և արեան ալիքը... Որովհետև այնտեղ է, որ իր «ազգայնական» գործունէութեան խարիսխ է հաստատել թուրք կապիտալիստ դասակարգը, նրա սպասաւոր մամուլը և նրա խնկարկու-իդէօլօգների կուռ բանակը, ամբողջ մահմեդական étatmajor-ը... Բագուն սկսել է, Բագուն թերևս կարող է և վերջ դնել վիթխարի կօշմարին, եթէ կամենայ... Բնական է, ուրեմն, որ մարդիկ հարց տան, արդեօք այդտեղ, այդ կենտրոնում չէ՞, որ խաղացվում է, իբրև մի ահաւոր կրկէսի մէջ, հայ-թուրքական անտագօնիզմի մեծագոյն դրաման, արդեօք Բագուի պայմանների վրա չէ՞, որ պիտի կառուցանել կովկասեան արիւնահեղ ընդհարումների պատճառաբանութեան ամբողջ շէնքը...

Եւ դարձեալ—ոչ:

(Կը շարունակվի)

Վերջին օրերս Թիֆլիսի միջնակարգ դպրոցների սաներից մի քանիսին ձերբակալել են: Ասում են, որ այդ ձերբակալութիւնները կապուած են քաղաքական գործերի հետ: Այդ առիթով նորից մեր միջնակարգ դպրոցներում կեանքն սկսեց ալեկոծուել, թէև միայն 2—3 օր է խաղաղութիւնն սկսել էր վերահաստատուել: Այնպէս որ երէկ կրկին գործադուլ են արել II գիմնազիայի սաները: Լուր կայ, ռէալական դպրոցը և միւս դպրոցներն էլ յուզմունքի մէջ են: Կարծես մի չար ձեռք հալածում, ազմկում է մեր երկիրը…

—

Թիֆլիսին բաւական յայտնի ձայնաւոր Ա. Բ. Նեամդուլեանը, որ պաշտօն ունէր երկաթուղու կենտրոնական վարչութեան մէջ, վերջին գործադուլի պատճառով նախ ենթարկվեց ձերբակալութեան, ապա արձակվեց պաշտօնից:

—

Արդէն փակված սօցիալ-դեմօկրատական «Մխիվի» լրագրի խմբագիր պ. Ախմէտելաշվիլին խնդիր է ներկայացրել, որ իրան թոյլատրեն հրատարակելու Թիֆլիսում վրացերէն լեզուով մի նոր լրագիր «Ցխօվրեբա» («Կեանք») անունով:

—

Բաքուի գեն.-նահանգապետ Ֆադէևը զարմանալի եռանդ է ցոյց տալիս… հայերին խուզարկելու գործում: Յունվարի 6-ին գիշերը նրա հրամանով խուզարկութեան են ենթարկել Հայազնեց կամ Երմանիքեանց կոչված Բաքուի արուարձանը և խլել մեծ քանակութեամբ զէնք… 4 ատրճանակ:

—

Թաւուզ կայարանում անյայտ ոճրագործների ձեռքով սպանվել է Դալլար գիւղի հողատէր Հասան-բէգ Շամխօրսկին, որ գնացել էր Թաւուզ՝ ուղեկցելով իր քոյրերին: Հանգուցեալը բարձր կրթութեան տէր մի անձն էր և ջերմագին մասնակցութիւն էր ցոյց տալիս հայ-թուրքական անմիտ և կործանիչ կոտորածները խափանելու գործում: Բայց երևի նրա այդ խաղաղարար գործունէութիւնը շատ էլ ձեռնտու և հաճելի չէր ոմանց, այդ պատճառով նրան սպանել տվին…

—

Թիֆլիսի «Հայրենասիրական» կուսակցութիւնը բաժանել է իր անդամներին իր կանոնադրութիւնը, բաղկացած 30 յօդուածից: Ընկերութեան նպատակն է նպաստել միացման այն բոլոր տարրերի, որոնք ցանկանում են հաստատ պահել և ամրապնդել կարգն ու հանգստութիւնը պետութեան մէջ հոկտեմբերի 17-ի մանիֆեստի սկզբունքների համաձայն: Ընկերութեան անդամ կարող են գրվել ամեն կրօնի ու ազգութեան մարդիկ—բաւական է որ ընկերութեան երեք անդամ վկայեն նրա վստահելիութիւնը: Ամեն մի անդամ վճարելու է ամսական 25 կոպէկ, որից գոյանում է ընկերութեան հիմնական դրամագլուխը: Ընկերութիւնն իր անդամներին հասցնում է նիւթական և բարոյական օժանդակութիւն: Միայն կանոնադրութիւնը լռութիւն է պահում այն մասին, թէ ինչ միջոցներով ինքն ուզում նպաստել կարգի հաստատմանը և ամրապնդվելուն:

—

Մեզ յայտնում են, որ այսօր Կուկեայ Նորաշէն Աստուածածնի եկեղեցում պէտք է տեղի ունենայ ժողով՝ քննելու երեցփոխի հաշիւը և մի քանի ուրիշ հարցեր, օրինակ երգեցիկ խումբ պահելու խնդիրը: Երգեցիկ խմբի ղեկավարութեան առիթով տեղի ունեն տարաձայնութիւններ ծխականների մէջ:

—

Թիֆլիս քաղաքի մեր հացավաճառները 1, 2 և 3 տեսակի ալիւրները մինչև ալիւրի ճգնաժամը և գործադուլը ստանում էին գլխաւորապէս Ռոստովից, մասամբ ևս գնում էին պետական ալիւր, որը խառնում էին Ռուսաստանի ալիւրի հետ: Բաթումի գծի փակվելով պատվիրած ալիւրները միայն Փոթի կուտակված, իսկ մինչև Բաքուի գծի բանելը տեղի ունեցաւ ալիւրի ճգնաժամ: Բայց երբ Բաքուի գիծը բանեց—ալիւր ներմուծվեց Բալաջարի, վրայով Ստավրոպոլի կողմերից, մասամբ ևս Ղարսի նահանգից և Ալեքսանդրապոլի գաւառից. զանազանութիւնը Ստավրոպոլից եկած ալիւրների և Ռոստով-Խերչ-Եկատերինոդարինը գլխաւորապէս Ֆրախտի մէջն է, որ այնքան մեծ պարբերութիւն չունի և ամենևին համեմատ չէ մեր շուկայում վաճառվող հացերի սակագնի հետ: Ուրեմն ինչ է պատճառը, որ մեր հացավաճառները շարունակում են 2-դ և յաճախ 3-դ տեսակի հացը 3 և 3¼ կոպէկի փոխարէն—5 կոպ. վաճառել փունտը: Պատճառը այն է, որ՝ մի անգամ սովորելով բարձրացնել սակագինը և ժողովրդին սովորեցնելով այդ գների հետ, իրանց շահասիրութեամբ չեն կամենում սահման դնել, նա մանաւանդ տեսնելով, որ հացի ճգնաժամից բռնված ժողովուրդը սարկի պէս իրենց ուզած գինը վճարում է, ստանալով այն ևս մեծ մասամբ խմոր, հում, թերթուխ հաց: Մանաւանդ յատկութեան կողմից մեղանչում են փռնչիները և տրասնչների տեղից տալիս: Եթէ այս երկու օրս Փոթից ալիւր ստացվի և քաղաքային վարչութիւնը ուժեղ միջամտութիւն չանի գների կանոնաւորելու մասին, միևնոյն անտէրութիւնը կը շարունակվի և խեղճ դասակարգը կը հանդիսանայ միշտ տուժողը:

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Յունվարի 12-ին II Մոլոկանսկի փողոցի վրա №46 տանը ապրողը ներկայացաւ 10-րդ մասի պրիստաւին և յայտնեց, որ դեկտեմբերի 20-ի գիշերը երեք անյայտ մարդիկ զինված ներս մտան իւր բնակարանը և սպառնալով, որ կը սպանեն, կողոպտեցին նրան, տանելով նրանից հազար հինգ հարիւր մանէթ փող, իսկ յետոյ դուրս գալով բնակարանից՝ անյայտացան:

—

Յունվարի 13-ին կէսօրվայ մօտաւորապէս ժամի 1-ին Ալեքսանդրեան փողոցի վրա, Ղամբարովի տանը, Թերէզա Կարլովնա Ակկերֆի սենեակից պահարանը կոտրելով գողացել տարել են 1775 րուբլու արժողութեամբ իրեղէններ: Գողութիւնը կատարել է նորա ծառան, Քութայիսի նահանգի Օնէթի գիւղի բնակիչ Ակակիա Մելիտաշվիլին, որը փախել է: Միջոցներ են ձեռք առնված նորան բռնելու:

—

Յունվարի 12-ին Քեարիմ բէկ Վէզիրովի տանը, որ գտնվում է Վորոնցովի փողոցի վրա, բնակվող Թիֆլիս քաղաքային Ղուլի Քալանթարովը յայտնեց 9-րդ մասի պրիստաւին, որ ամսիս 11-ին, մօտաւորապէս առաւօտեան ժամի 10-ին, բացակայութեան միջոցին, իրան ծանօթ Թուրք Շէրիֆ Յօմիևը, կոտրելով իւր բնակարանի պատուհանի ապակին, ներս է մտել և գողացել այնտեղից Վեքիլովին պատկանող բերդան սիստեմի հրացանը 120 փամփուշտներ էլ հետը, և զանազան ոսկեղէն իրեր, իրան, Քալանթարովին պատկանող, արծաթէ գօտի և 300 րուբլի փող, ընդամենը 850 րուբլու արժողութեամբ, և անյայտացել է: Նրան որոնելու ու բռնելու համար միջոցներ են ձեռք առնված:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՎԷՃՆ ՈՒ ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՊՐՈԼԵՏԱՐԻԱՏԸ

I

Ինչպէս «Մշակ»-ում խօսել էինք, մարոկկեան հարցի առիթով Ֆրանսիայի և Գերմանիայի մէջ ծագած վէճը խոր դժգոհութիւն առաջ բերեց ֆրանսիական պրոլետարիատի շրջբերում և սօցիալիստ Էրվէ բացարձակ յայտնեց, որ ֆրանկո-գերմանական մի պատերազմի դէպքում բանւորները կը դարձնեն իրանց զէնքը նկարիչների դէմ: Հակապատերազմական շարժումը հետզհետէ աճելով՝ տեղի տուեց մի բնորոշ ցոյցի: Մի խումբ գործիչներ հրատարակեցին մի պրօկլօմացիա, որով հրաւիրում էին նորակոչներին գիտակցել իրանց շահերը և գործիք չը դառնալ բուրժուազիայի ռազմասէր տրամադրութիւններին: Ֆրանսիական կառավարութիւնը նորակոչներին ուղղված այդ կոչից յուզված դատի ենթարկեց պրօկլօմացիայի տակ ստորագրողներին և դատապարտեց նրանցից մի քանիսին: Այդ, ինչպէս և երկու բանւորների ձերբակալութիւնը Ամիէնում, գործադուլի ժամանակ կատարված դէպքերի պատճառով, առիթ տուեցին բանւորական սինդիկատների Միութեան բողոքի մի հսկայական միտինգ կազմել Պարիզում: 15,000 գործաւորների առաջ խօսք առաւ նախ Աշխատանքի ընդհանուր Դաշնակցութեան քարտուղարը: Այնուհետև խօսեց մի ուրիշը՝ յոյս յայտնելով, որ նախագահական ընտրութիւնից յետոյ ընդհանուր ներում կը յայտարարվի: Ժօրէս յաջորդելով նախորդ խօսողին՝ երկարօրէն ծանրացաւ այն մտքի վրա, թէ անհրաժեշտ է, որ պրօլետարիատը հարկադրէ տիրապետող, վարող դասակարգերին համաձայնութիւնը և անխնայ կռիւ մղէ ռուսական բացարձակ միապետութեան, Վիլհելմի նուաճողական քաղաքականութեան և ֆրանսիական բուրժուազիայի դէմ: Իսկ ինչ վերաբերում է պրօլետարիատի քաղաքական ներկայացուցիչներին, պատգամաւորներին, նրանց դերը պէտք է լինի քօղամերկել բուրժուազական ինտրիգների առաջին սերմերը, առաջին ամենաթեթև նշանները, որոնք կարող են պատերազմ առաջացնել և—խեղդել այդ սերմերը:

Բացագանչութիւններն ընդհատում են Ժօրէսի ճառը. նրան մեղադրում են այն, որ նա յստակօրէն չէ արտայայտում իր միտքը, հակամիլիտարական հարցի, միտինգի բուն առարկայի մասին: Դը Ժանտ պատգամաւորի և հակամիլիտարիստական կոչի տակ ստորագրելուն համար Սէնի երդուեալ դատաւորների կողմից դատապարտված Նուլէի ճառերից յետոյ, ներկայ եղողները վճռում են, համերաշխութեան ոգուց դրդված, ստորագրել մի կոչ, որի մէջ պարզապէս յայտնված պէտք է լինի, որ ստորագրողները բացարձակապէս բաժնում են Սէնի երդուեալների կողմից դատապարտված հակամիլիտարիստների գաղափարները:

—Շատ լաւ, շատ լաւ: Թող Ժօրէսն ստորագրէ, աղաղակում են ամեն կողմից: Եւ ներկաներն սկսում են ազմկել. «Կը ստորագրէ», «Չի ստորագրի»: Ժօրէս յայտնի կերպով ներվային դարձած, յայտարարում է, որ ինքը միանգամայն անհնար է գտնում տալ իբրանից պահանջված ստորագրութիւնը:

—Մենք, ասում է, պարտականութիւն ունենք պաշտպանելու, նոյն իսկ օտարների դէմ, այն մի քանի ազատութիւնները, որ մենք նուաճել ենք:

Այդ բացատրութիւնը չէ գոհացնում ժողովականներին: Նորից պահանջում են, որ Ժօրէսը առանց այլևայլութեան դատապարտէ միլիտարիզմը և ստորագրէ հակամիլիտարիստ յայտարարութեան տակ:

Ջուր ջանք: Ժօրէս թողնում է բեմը և երկու այլ պատգամաւորների հետ հեռանում է:

Բուէարկվում է մի որոշում, որից առաջ ենք բերում հետևեալ մասերը,

«Սինդիկատ կազմած բանւորները բողոքում են Ամիէնում ձերբակալված երկու ընկերների բանտարկութեան դէմ: Զարմանք են յայտնում, որ մեր օրերում, Դրէյֆուսի դատի փորձառութիւնից յետոյ, դատի, որի համար բոլոր բանւորները՝ մղված յեղափոխական արդարութեան գաղափարից՝ դաշնակցել էին, այսպիսի բացայայտ անարդարութեամբ ոտնակոխ են լինում մարդկային իրաւունքները: Զարմանում են, որ խօսքի և մամուլի ազատութիւնը խեղդված է. համոզված են, որ պ.պ. Մէլիէ, Ժօրէս և դը-Ժանտ կը բողոքեն, պատգամաւորական ժողովում, միլիտար գործողների դէմ ուղղված անարդարութիւնների այդ շարքի դէմ: Յանձն են առնում, եթէ արդարութիւնը չը հաստատվի, մղել Պարիզում և գաւառներում ուժեղ ագիտացիա»:

Զ.

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

13 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի: Սահմանադրական-դեմօկրատների կուսակցութիւնը Պետերբուրգում բաց արեց ագիտացիայի բիւրօ, որի նպատակն է պարզել կուսակցութեան նպատակները: Բիւրօն մտադիր է հասարակական դասախօսութիւններ կարդալ, տարածել կուսակցական գրականութիւնը:

Զեմստվային վարչութիւններին կից գրքերի պահեստներին հրամայված է անյապաղ հանել վաճառումից այն բոլոր գրքերն ու բրօշիւրները, որոնք լոյս են տեսել վերջին 3 ամիսներում առանց նախնական ցենզուրայի:

Ընտրողական յանձնաժողովները պատասխանեցին բնակարան վարձող կանանց հարցին, որ ընտրողական իրաւունք ունեն միայն բնակարան վարձող տղամարդիկ:

ՄԱԿԱՐԵՕՎ, 12 յունվարի: (Կոստրոմայի նահ.) Տիմոշինսկի գիւղախմբում անկարգութիւնները զսպելու համար Կոստրոմայից ուղարկվել են կազակներ. գնում է և նահանգապետը:

ՄՈՍԿՎԱ, 12 յունվարի: Գեն.-նահանգապետը յայտարարում է. «Դեկտեմբերի 11-ի Բարձրագոյն ուկազով, ընտրելու բոլոր իրաւունք ունեցող անձերին իրաւունք է տրված յայտնելու իրանց ցանկութիւնը լրացուցիչ ցուցակներ կազմող հիմնարկութիւններին: Եղած տեղեկութիւններից տեսնելով, որ այդ մասին յայտարարութիւնները խիստ չնչին են, դիմում եմ Մոսկվայի և նրա նահանգի բնակիչներին, կոչ անելով, որ անպատճառ օգտվեն շնորհված իրաւունքով:»

ՑԱՐԻՑԻՆ, 12 յունվարի: Գեն.-նահանգապետ Մակսիմովիչի կարգադրութեամբ անորոշ ժամանակով դադարեցված է «Царицинскій Вѣст.» լրագիրն իր ուղղութեան համար:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի: Պաշտօնական: Կովկասի փոխարքայի հեռագիրը Նորին կայսերական Մեծութեանը, ուղարկված յունվ. 11-ին. «Ամենահպատակօրէն զեկուցանում եմ Ձեր Կայսերական Մեծութեանը. Սոխումի շրջանի գլխաւորը զեկուցեց ինձ, որ պօստ-հեռագրական գործադուլի սկզբից խառնակիչները մտադիր էին գրաւել իշխանութիւնը Սոխումում և տիրանալ գանձարանին, բայց նրանց այդ չաջողվեց: Քաղաքը յայտարարվեց ուժեղացրած պահպանութեան դրութեան մէջ և ագիտատորների մի մասը ձերբակալվեց: Դեկտեմբերի 22-ից կեանքը մտաւ իր սովորական ընթացքի մէջ, հրոսակախմբերը ցրրված են: Աբխազներն իրանց լաւ են պահում: Նովօրոսսիայի նահանգապետը զեկուցանում է, որ Նովօրոսսիայում և Թուապսէում կարգը վերականգնված է, Սօչիում և Սօչիի շրջանում ուղարկված զօրքերը կարգը վերականգնում են: Իմ ուղարկած զօրքերը երկաթուղու երկարութեամբ, գրաւելով Քութայիսը, վերականգնում են հաղորդակցութիւնը Բաթումի մօտերը՝ Նօթանեբիի և Քարալէթի միջև:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի: Ստացված հեռագրական տեղեկութիւնների համաձայն՝ Սարատովում, Մինսկում, Բելօստօկում, Կոստրոմայում կեանքը մտնում է իր սովորական հունի մէջ: Բոլոր դպրոցական հաստատութիւններում պարապմունքները վերսկսված են:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի: Հաղորդում են Վլադիվօստօկից, որ գեներալ Սելիվանովը ծանր վիրաւորված է և նրան յաջորդել է ժամանակաւորապէս գեներալ Մեդլենը: Ցուցարարների խումբը Մանջուրիա կայարանում յունվարի 9-ին դիմեց վօկզալ կարմիր դրօշակներով: Զինւորները հրամայեցին ցրվել, տեղի ունեցաւ կռիւ, դրօշակները պատռվեցին, սպանվեց մի ցուցարար, վիրաւորվեցին ծանր 4 հոգի, իսկ թեթև՝ 30:

ՈՒՖԱ, 12 յունվարի: Յունվարի 1-ին նահանգապետը գումարեց խորհրդակցութիւն դատաւորների, հոգևորականութեան, քաղաքի, զեմստվայի, փաստաբանութեան, մուսուլմանների, ազնուականութեան և ժանդարմերիայի ներկայացուցիչներից, ընդամենը 200 հոգի: Ընտրվեց նահանգական կոմիտէ՝ հոկտեմբերի 17-ի և նոյեմբերի 3-ի մանիֆեստները կեանքի մէջ մտցնելու, կարգը վերականգնելու և ծայրահեղ կուսակցութիւնների ակտիւ ձգտումներին դիմադրելու համար:

ԼՈՆԴՈՆ, 12 յունվարի: Մինչև երեկոյ ընտրված են 342 ազատամիտ, 41 բանւորական կուսակցութեան, 140 ունիօնիստ, 81 նացիօնալիստ: Բէյլերի խօսակցութեան մէջ, չինական նոր դեսպանը ասաց, որ պատերազմի հետևանքն եղաւ Չինաստանի բացումը համաշխարհային առևտրի համար: Հարաւային Չինաստանի ժողովուրդը գիտակցում է Ճապօնիայի մեծ գործի առաջին հետևանքները: Չինաստանը վճռել է ամեն բան անել, որ դառնայ կուլտուրական երկիր: Դաշնակցութիւնը Ճապօնիայի հետ այժմ անիրագործելի է, բայց Չինաստանի յաջորդական խաղաղ զարգացումը կարող է շատ սերտ կերպով մօտեցնել նրան Անգլիայի և Ճապօնիայի հետ: Չինաստանը ցանկանում է անպատճառ պահպանել իր վեհապետութիւնը Տիբէտի վրա և պահանջում է անգլօ-տիբեթեան դաշնագրի փոփոխութիւնը:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 12 յունվարի: Ռուս-աւստրօ-ունգարական առևտրական դաշնագիր կնքելու մասին բանակցութիւնները վերջացան այսօր: Ռուսաց լիազօրների վերջնական առաջարկութեան՝ աւստրօ-ունգարական դեսպանը չը տալով վերջնական պատասխան, վերադարձեց իրան իրաւունք՝ տալ այդ պատասխանը Աւստրօ-Ունգարիայի հետ բանակցելուց յետոյ:

ԼՈՆԴՈՆ, 12 յունվարի: Մինչև կէսօր ընտրված են 325 ազատամիտ, 30 բանւորական կուսակիցներ, 81 նացիօնալիստ, 137 ունիօնիստ: Ազատամիտները ձեռք բերին 165 տեղեր:

ԳԱՆՁԱԿ, 12 յունվարի: Պարապմունքները դպրոցներում սկսվեցին: Թուրքերը և այն ուսանները, որոնք բնակվում են թուրքական մասում, թուրքերի և հայերի մէջ եղած թշնամական յարաբերութիւնների պատճառով, միջնորդում են, որ գիմնազիայի զուգահեռական դասարանները փոխադրվեն թուրքական մաս:

14 յունվարի

ՀԵԼՍԻՆԳՖՕՐՍ, 13 յունվարի: Սենատը որոշեց ոչնչացնել գրաքննական պաշտօնները 1906 թ-ի վերջից: Դրանց պաշտօնը յանձնվում է մամուլի գործերի վերաբերեալ գլխաւոր վարչութեան անդամներին:

ՌԻԳԱ, 13 յունվարի: Անցեալ գիշերը Բէլվէլսկայա փողոցի վրա խուզարկութեան ժամանակ մարտնչող կազմակերպութեան զօրախմբի զէնքի պահեստը:

ԺԻՏՕՄԻՐ, 13 յունվարի: Բոլոր դպրոցներում սկսվեցին պարապմունքները և ընթանում են բնական կարգով:

ՔՈՒԹԱՅԻՍ, 13 յունվարի: Գեներալ-նահանգապետ Ալիխանով պաշտօնից հեռացրեց նահանգապետ Ստարօսելսկուն և փոխ-նահանգապետ Կոպլիձէին: Հաղորդում են, որ երէկ նրանք կալանաւորվեցին Կվիրիլում:

ՎԼԱԴԻՎՕՍՏՕԿ, 13 յունվարի: Յունվարի 9-ին սիբիրեան էկիպաժի նաւաստիները ջարդեցին ամբարը զէնքով, տարան հրացաններ և փամփուշտներ, ապա, ամսի 10-ին կայացաւ միտինգ, ուր զինւորներն եկան վինտովկաներով և փամփուշտներով: Միտինգը վերջանալուց յետոյ գնացին դէպի բերդի կոմենդանտի բնակարանը պահանջելով ազատել կալանաւորվածներին: Ընթացքը կանգնեցրվեց գնդացիրներով: Նաւաստիները փախան: Երեկոյեան մօտ քաղաքը հանգստացաւ: Ամսի 11-ին գեներալ Սելիվանով ծանր վիրաւորվեց: Ինօկենտիևեան բատարէյան ամսի 11-ին գրաւեցին վինտովկաներով զինաւորված արտիլլերիստները: Բերդի կոմենդանտ գեներալ Սելիվանով գնաց դէպի բատարէյան համոզելու նրանց: Նրանք իբր թէ խաղաղվեցին, բայց երբ նա սկսեց հեռանալ, նրա վրա կրակ բացին վինտովկաներից և գնդացիրներից, որով Սելիվանով վիրաւորվեց կրծքից և վզից: Վիրաւորվելու ելքը բժիշկները չեն որոշել: Նիկոլսկից ուղարկվեցին երկու հարիւրեակ ինգուշներ, գալիս են նոյնպէս 4 հարիւրեակ օրենբուրգցիներ գնդացիրներով: Կոմենդանտ նշանակված է գեներալ-ադյուտանտ Միշչենկօ:

ԼՈՆԴՈՆ, 13 յունվարի: Թագաւորը կը բանայ պարլամենտական նստաշրջանը փետրվարի 6-ին: Առաջիկայ պարլամենտական նստաշրջանի ծրագրի մէջ կը մտնէ Իրլանդիայի ժողովրդական կրթութեան օրէնքի փոփոխութեան հարցը դպրոցների վրա աւելի բացարձակ հասարակական կոնտրոլ նշանակելու մտքով, վերացնել ուսուցիչների կրօնական քննութեան պահանջը: Խմիչքներ վաճառելու օրէնքները նոյնպէս կը փոխվեն տեղական ինքնավարութեան իրաւունքները ընդարձակելու մտքով այդ հարցում: Բանւորական օրէնսդրութեամբ կը նուիրվի գլխաւոր ուշադրութիւնը, բանւորական դաշնակցութիւնները մեծ ինքնուրոյնութիւն կը ստանան դրամագլուխների կարգադրութեան գործում: Բանւորների խեղանդամութեան համար վարձատրելու օրէնքը կը տարածվի աշխատանքի բոլոր ճիւղերի վրա, կը վերաքննվեն չքաւորների վերաբերեալ օրէնքները բանւորական տները բարւոքելու հարցը հասարակական օգնութիւնը ընդարձակելու մտքով և տարածելու նրան աշխատանք չունեցողների վրա: Հարկերի նշանաւոր կրճատումն հազիւ թէ կարելի լինի սպասել առաջիկայ նստաշրջանին, որովհետև այժմեան մինիստրութիւնը ստիպված է անցկացնել անցեալ կաբինէտի բիւդժէտային ենթադրութիւնները: Այնպիսի նշանաւոր հարցեր, ինչպէս իռլանդականը և աֆրիկականը, երևի չեն շօշափվի, մինչև որ չը պարզվեն փոխադարձ յարաբերութիւնները և նրանց խմբակցութիւնները:

ՔՈՒԹԱՅԻՍ, 13 յունվարի: Ծայրայեղ կուսակցութիւնների երկու ամսվայ տիրապետութիւնից յետոյ զինւորական իշխանութիւնները վերականգնեցին ճանապարհը. սկսեցին զինաթափ անել ազգաբնակութեանը: Մտցրվեց զինւորական դրութիւն: Գեներալ-նահանգապետ Ալիխանով ժամանեց Կվիրիլ, ուր կողոպտված է գանձարանը: Այնտեղ է կանչված նահանգապետ Ստարօսելսկի:

ԿՕՆՍԿ, 13 յունվարի: (Ռադոմսկի նահանգ): Առաւօտեան 5 ժամին Սկարժիսկօ-Իվանգորոդ-Դոմբրովսկայա երկաթուղու կայարանի վրա վիրաւորվեց ռէվոլվէրի հարուածով ուսից Սանդոմիրեան սահմանային պահակի հրամանատար պօրուչիկ Կիսլիցին:

ԿԻԵՎ, 13 յունվարի: Կազատին կայարանում պօստային վագոնից գողացվել են 20,000 ր. գումարի պօստային մարկաներ: Մարկաները Պետերբուրգից ուղարկվում էին Կամենեց-Պոդոլսկ:

ԽԱՐԿՈՎ, 13 յունվարի: Պարապմունքները վերսկսվեցին միջնակարգ դպրոցներում:

ՌԻԳԱ, 13 յունվարի: Լօմբուրգում, Ռիգայի գաւառում, դաշտային դատարանի վճռով հրացանի բռնվեցին 5 լատիշ յեղափոխականներ, Պատժական արշաւանքները շարունակվում են:

ՎԱՐՇԱՎԱ, 13 յունվարի: Կազմակերպվում է անկուսակցական լեհական կաթոլիկ դաշնակցութիւն: Տեղական իշխանութիւնների կողմից հաւանութիւն գտած կանոնադրութեան նախագիծը առաջարկված է Պետերբուրգի հաստատութեան:

ՍԻԶԵՕՎԿԱ, 13 յունվարի: Արտակարգ ժողով է հրաւիրվում քննելու համար հողային գործի դրութիւնը գաւառում, զեմստվային յանձնաժողովի հիմնումը օգնելու համար գիւղացիներին հողեր գնելու: Գաւառում հողի շատ առ ու ծախս է լինում. ընկերակցութիւններն են գնում հողերը: Գները թանգ են 165-ից մինչև 200 ր. դեսեատինը: Բէլսկի և Գժատսկի գաւառներում տեղ տեղ ագրարային անկարգութիւններ են. կտրտում են անտառները: Սենևսկի գաւառում հանգիստ է:

ՏՈՄՍԿ, 13 յունվարի: Տեխնօլօգիական ինստիտուտի խորհուրդը վճռեց քննել Դուման գումարելու վերաբերեալ պարապմունքների հարցը: Սեմինարիա հաւաքվեցին պարապվել, ցանկացող համարեա բոլոր աշակերտները: Պարապմունքները կը սկսվեն յունվարի 14-ին գիմնազիայում, իսկ 16-ին իգական գիմնազիայում: Գաւառում հանգիստ է:

ԻԶԻՒՄ, 13 յունվարի: Վերադարձած պահեստի զինւորների պահանջները նպաստի մասին սպառնալի բնաւորութիւն ստացան, հարկադրել գաւառական վարչութեան նախագահին հեռանալ պաշտօնից: Գաւառում կտրտում են անտառները:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 13 յունվարի: Գեներալ-նահանգապետի հարցապնդումին, թէ արդեօք ճիշտ են պետական նոր ակտի լուրերը մասնաւոր կալուածատէրերի հողերը գիւղացիների կարիքների համար տալու մասին, մի բան, որ անհանգստութիւն պատճառեց ազնուականութեան պարագլուխների համաժողովին Մոսկվայում, Վիտտէն հեռագրեց, որ հողի բարեկարգութեան գլխաւոր վարչութիւնը նախագիծ է կազմել գիւղացիների հողն աւելացնելու, բայց նախագիծը չէ քննել մինիստրների խորհուրդը:—Յամենայն դէպս այդպիսի հիմնական հարցերը առանց Դումայում և խորհրդում քննվելու լուծում չեն ստանալ: Հարցը նախորոշող որ և է ակտ տեղի չի ունենայ: Ցանկալի է, որ պարագլուխների համաժողովը ներկայացնէ իր խորհրդածութիւնները:

ՑԱՐԻՑԻՆ, 13 յունվարի: Կայացաւ սահմանադրական-դեմօկրատական կուսակցութեան ժողովը, որը կազմակերպիչ բիւրօ ընտրեց հինգ անդամներից կոմիտէներ գրաւելու համար:

ՄՈՍԿՎԱ, 13 յունվարի: Ազնուականութեան նահանգական և գաւառական պարագլուխները, լսելով Ամենահպատակ ուղերձի պատասխանը և Թագաւորի Ամենաողորմած հեռագիրը, որոշեցին. իշխանութեան հեղինակութիւնը հաստատելուն նպաստելու և երկիրը խաղաղեցնելու ու պետութիւնը ամրացնելուն ծառայելու համար անհրաժեշտ են՝ 1) ամուր օրինական կառավարչական իշխանութիւն, որը յաջորդաբար խեղդի միջոցներ է գործ դնում յեղափոխական շարժումը ճնշելու և խաղաղ ազգաբնակութիւնը բռնութիւնից պաշտպանելու համար. 2) համոզմունք, որ Պետական Դուման կը գումարվի. 3) ընտրութիւնների ազատութեան օրինական նախընտրական ժողովների պաշտպանութիւն: Ազնուականութեան պարագլուխների համաժողովը փակվեց: Հրաման է տրված զարնիզոնին զէնք չը գործ դնել ժողովրդի փոքրաթիւ համախմբումները ցրվելու համար որը մի քայլ է արտակարգ պաշտպանութեան դրութիւնը մեղմացնելու համար:

ԼՕԴԶ, 13 յունվարի: Ցերեկվայ 4 ժամին զինված չարագործները, ներս խուժելով երեք թաղային ընտրողական յանձնաժողովները, ոչնչացրին բոլոր թղթերը և ցուցակները:

ԱՍԽԱԲԱԴ, 13 յունվարի: Շրջանային սանիտարական յանձնաժողովը, Տուրքէնի և Շէյկիշէնի շրջականներում ժանտախտը ճնշելու տեղեկութիւնը հաստատվելուց յետոյ, որոշեց անյապաղ փակել ռուս-պարսկական սահմանը Գաւդանից մինչև Չիլֆադա:

ԽԱՐԿՈՎ, 13 յունվարի: Կալանաւորված է տեղական երկաթուղիական արհեստանոցների ինժեներ Ստեպանով:

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԵԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺՇԿԱՊԵՏ Բ. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆԻ
Հիմնված 1880 թ.
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)
Ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՒՕՏՆԵՐԸ
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—11—12 ժ. վիրաբուժութեան, վեներական (սիֆիլիս) և միզասեռ. հ.
ՉԻԿՕՎԱՆԻ—9—10 ժ. աչքի. ներքին և ներքոյային
Զ. Ի. ԱԽՍԵՏՍԵԱՆ—11—12 ժ. մորթու, վեներակ և վիրաբուժութիւն:
Զ. Ի. ԲԱԲԱՆԱՍԵԱՆՑ—10—11 ժ. մանկաբարձութեան, կանանց և երեխայոց հ.
Կ. Ի. ԳԶԵԼԻԵՎ—12—1 ժ. ականջի, քթի և կոկորդի
Ա. ՆԱՐԱԳՈՏԵԱՆՑ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.
ԳՐՆ-ԲԺԻՇԿ ՇՉԵՐԲԻՆԻՆԱ—1½—2 ժ. մանկաբարձութեան և կանանց հ.
Գ. Յ. ԳՈՒՐԴՆՕՎ—1—2 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
ԵՐԵԿՈՆԵՐԸ
Ա. Մ. ՓՈՒՂԻՆՕՎ—5—6 ժ. ներքին և երեխայոց 5 և ծաղկահատ.
Խ. Յ. ԱՐԵՆԵՑ—6—7 ժ. ներքին հիւանդ.
Բ. Ա. ՆԱՒԱՍԱՐԴԵԱՆ—7—7½ ժ.
Գ. Ա. ԱՐԳԱՋԻԱՆԻ. Կատարում է միկրօ-քիմիական և բակտերիոլոգիական հետազօտութիւններ:
Վճարը 50 կ. Աչքաւորները ձրի: Համախորհրդի (կոնսիլիում) և օպերացիայի համար առանձին:
Հիւանդանոցի վերատեսուչ
բժշկապետ Բ. Նաւասարդեան

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԲԺԻՇԿՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ
մշտական մահճակալներով:
Ելիզավետինսկայա փողոց, 101, տելեֆօն 1026.
Հիւանդների ընդունելութիւն ամեն օր:
Մ. Գ. ԱՂԱՋԱՆԵԱՆՑ 11—12 ժ.—միզասեռական, կաշուի և սիֆիլիս:
Ի. Ն. ԵՂԻԱԶԱՐԵԱՆՑ 11—12 ժ.—ջղային, ներքին հ. և ելեքտրո-բուժութիւն:
Գ. Ն. ԴԵՄԻԴՕՎ—11—12 կ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Ի. Ե. ԱԽՍԵՏՍԵԱՆՑ 12—1 ժ. կանանց հ. և մանկաբարձութիւն:
Գ. Հ. ԹԱԴԵՈՍԵԱՆ 12—1 ժ. ներքին և երեխայոց հ.
Մ. Գ. ԿԻՄՕՆՏ. 1—2 ժ. վիրաբուժական հ.
Մ. Մ. ԷԼՋԻԵԱՆ 1—2 ժ. քթի, կոկորդի և ականջի:
Գ. Ա. ԲԵՅԵՐ—երեխայոց և ներքին հ.
Հիւանդանոցում բժշկում են հիպնօզով, կատարվում ելեկտրօսկոպիական, բակտերիօլօգիական և քիմիական հետազօտութիւններ, նոյնպէս և ծաղկահատութիւն և ստնտուների (кормилица) ընտրողութիւն: Բժշկական խորհրդի համար վճարը 50 կոպ.: Օպէրացիայի և համախորհրդի վճարը ըստ համաձայնութեան: Գիշերօթիկ հիւանդների բաժանմունքը բաղկացած է ընդհանուր սենեակներից և առանձին նոմէրներից:
(չ.ու.կ.) 30—100

ԲԺ. Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Ընդունում է մասնաւորապէս սիֆլիսի, միզային, վեներական և մորթու ախտ ունեցող հիւանդներին ամենայն օր, առաւ. 12—2 ժ. և 6—8 երեկ. Սօլօլակ, անկիւն Բեբուտովսկի և Պասկևիչա փող. № 33/15 տ. Միրիմանեանի (Նախկին օրիորդաց 3-դ գիմնազ. տուն):
(ա. օ.) 31—100

ԲԺԻՇԿ
Լևոն Օհանջանեան
Մասնագէտ միզային, վեներական, սիֆիլիսի և կաշուի հիւանդութիւնների: Ընդունում է առաւօտեան 9-ից մինչև 11 ժամը, երեկոյեան 6—9 ժամ.: Կանանց և երեխաների համար 11—12 ժ.: Հասցէն անկիւն Գօլովինսկի պրօսպեկտի և Կաղեստկայեա փողոցի, տուն Թամամշեանի: Մուտքը Կաղեստկի փողոցից № 2,
(ա. օ.) 72—300

ԷԼԵԿՏՐՕ-ԲՈՒԺԱԿԱՆ ԿԱԲԻՆԵՏ
Բժիշկ Միխայել Գեդեվանօվի
Ջղային հիւանդների ընդունելութիւնը
Առաւօտեան ժամի 12-ից մինչև 1-ը,
Երեկոյեան ժամի 6-ից—7-ը,
Կորգանօվսկայա փող. № 20 Վերայում: Սեփական տ., տելեֆօն № 791: (ա. օ.) 46—150

ՄԻ ՀԱՅ ՕՐԻՈՐԴ,
որ գիտէ հաշուապահութիւն և կարող է նոյնպէս պարապել փոքր երեխաների հետ հայերէն, որոնում է համապատասխան պաշտօն: Հասցէն՝ Орловская ул., № 11, кв. Гукасова.
1—2

ՀՐԱՒԷՐ
Հոգևոր վարչութեան կարգադրութեամբ Վանքի աւագ եկեղեցու ծխականները հրաւիրվում են կիրակի, ամսիս 15-ին, ցերեկվայ ժամը 12-ին, ծխական ժողովի, ընտրելու երեք լիազօրներ, որոնք ընտրելու են բոլոր եկեղեցիների լիազօրների ընդհանուր ժողովում չորս պատգամաւոր՝ մասնակցելու Փոխարքայի դիւանատան կից գումարվելիք խորհրդակցութեան, որի նպատակն է միջոցներ ձեռնարկել դադարեցնելու հայ-թուրքական ընդհարումը:
(չ. կ.) 2—2

ՀՐԱՒԷՐ
Թեմիս սրբազան Առաջնորդի հրամանի համաձայն, կիրակի, ամսիս 15-ին, Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցում, սուրբ պատարագից յետոյ, ժամը 12-ին, կայանալու է ծխական ժողով՝ ընտրելու երեք պատգամաւոր հայ-թուրքական ընդհարումների առաջն առնելիք խաղաղարար յանձնաժողովին մասնակցելու համար. ուստի խնդրում եմ մեր եկեղեցու բոլոր ծխականներին ներկայ գտնվել ընտրութեանը:
Ներսէս ա. ք. Ղամազեանց
(չ. կ.) 2—2

Տպագրվում է և շուտով լոյս կը տեսնի Բ. հրատարակութեամբ Յարութիւն Եսայեանի «Միևնոյն դագաղում» գրքոյկը, պատկեր Բաքուի կոտորածից: Զոհերի երկու նկարներով. կազմաթուղթը գեղարուեստական նկարով: Գինը 7 կոպէկ: Գումարով գնողներին զեղչ: Առանց կանխավճարի չէ ուղարկվում: Նախօրօք պատուէր ուղարկողներին գրքոյկը անմիջապէս կուղարկվի լոյս տեսնելուց յետոյ: Դիմել հեղինակին՝ Թիֆլիս, Հավլաբար, Լազարևսկայա, № 49. 3—3

„ՅԱՌԱՋ“
օրաթերթը լոյս է տեսնելու առաջիկայ երեքշաբթի օրվանից:
Շարունակվում է բաժանորդագրութիւնը:
Դիմել խմբագրատուն—Ֆրեյլինսկայա փողոց, տուն № 6. 2—2

Տափ-բաղի (Քամոյեանց) Ս. Գէորգ եկեղեցու երկու թափուր խանութներ, Սէվերնի-նոմերներ հիւրանոցին կից, տրվում է վարձով: Պայմանների մասին տեղեկանալ նոյն եկեղեցու երեցփոխ Վարդապետեանից, Սուրբենայա փողոցում, տուն № 17. 3—3

ԲԺՇԿԱՊԵՏ Մ. ՄՈՒՐԱԴԵԱՆ
նախկին օրդինատօր Մոսկվայի համալսարանի կլինիկայի
Վերսկսեց ընդունելութիւնը յատկապէս միզանցքասեռական, սիֆիլիսի և կաշու հիւանդութիւններ ունեցողներին: Ընդունելութիւնն ամեն օր՝ 10—11 ժամին առաւօտեան և 5—7 ժամին երեկոյեան: Բարեատինսկայա փող. № 1, «պօժարնի կօմանդի» դիմացը. տելեֆօն № 11.
(ա. օ.) 3—20

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՂՈՎԱՐԱՆ
Կիրակի, յունվարի 15-ին, 1906 թւին, ցերեկվայ ժամը 11-ին, նշանակված է տարեկան ընդհանուր ժողով պ.պ. անդամների, ընտրելու աւագներ և վերաքննիչ յանձնաժողովի անդամներ, նոյնպէս և քննելու և հաստատելու 1905 թւի հաշիւը և 1906-ի նախահաշիւը: Դրանից յետոյ ժամը 3-ին կը կայանայ ճաշ անդամների և կանդիդատների համար—1 ր. 40 կոպէկ վճարով ամեն մի անձից, առանց գինու: (12,14,15) 3—3

„ԸՆԿԵՐ“
Հասարակական—գրականական շաբաթաթերթ ամենալայն ծրագրով:
Տարեկան բաժանորդագինը 3 րուբլի: Բաժանորդ կարելի է գրել խմբագրատանը և գործակալների մօտ: Առաջին համարը շուտով լոյս կը տեսնի:
Խմբագիր—հրատարակիչ՝
Փիլ. դոկ. Սեդրակ Թառայեանց
Հասցէն՝ Тифлисъ. Редакція «Ингеръ» (Товарищъ). 3—3

ԲԺ. Ն. ԵԱՐԱՄԻՇԵԱՆ
Ներքին, մանուկների, կաշուի և վեներական հիւանդութիւնների համար:
Ընդունում է ամեն օր առաւօտեան 9—12 ժ.
երեկոյեան 5— 7 ժ.
Հասցէ—Աբասաբադեան հրապարակ № 9, մուտքը Շեյկօֆսկեան փողոցից № 1:
(եր.հ.կ.) 18—20

ԲԱՑՎԱԾ Է ՆԵՐԿԱՅ 1906 Թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ
ԱՂԲԻՒՐ ՏԱՐԱԶ
Աղբիւրի նպատակն է զարթեցնել և զարգացնել հայ երեխայի մէջ բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն դէպի չարն ու վնասակարը:
Աղբիւրը իր մատաղ ընթերցողների սրտերում ցանում է գթութեան, ինքնաճանաչութեան, անվեհերութեան սերմեր:
Տարազը Աղբիւրի հասունացած սաների խնդակցութեան և վշտի արտայայտողն է, նրանց մտքերի, զգացումների թարգմանը:
Տարազը ձգտում է առաջադիմութեան ուղիղ ճանապարհով ընթացող, առաքինութեամբ օժտված, գիտութեան անշէջ լուսով զարգացած, հայրենասիրութեամբ բորբոքված հայ անդամներ սնուցանել:
Աղբիւր և Տարազ միևնոյն հասցէով բաժանորդներին ձրի ուղարկելու են Առողջապահ, Գեղափնջիկ, Դաստիարակ և Իլլիւստրասիօն, որոնց համար առանձին բաժանորդագրութիւն առայժմ իրաւունք չենք համարում մեզ բանալ, քանի որ մեր երկիրը քաոսի մէջ է: Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով բաժանորդ գրւողը կստանայ 1906 թ. մեծադիր, հատուածական պատի օրացոյց, բաղկացած 370 թերթից:
Աղբիւրի տարեկան բաժանորդագինը 3 ր. (արտասահման 5 ր.) Տարազ-Աղբիւր միասին 10 ր. (արտասահման 18 ր.):
Հասցէն՝ Тифлисъ, Редакція Агбюръ կամ Таразъ. (Tiflis, Redaction du journal Taraz, կամ de larevue Agbur.)
1—2
Խմբագիր-հրատարակիչ՝ Տիգրան Նազարեան

Տպարան «ՀԵՐՄԷՍ» ընկ.
Электропечатня типографскаго Т—ва Гермесъ, Мад. ул. № 15.